

891.99

5-52

## **БЕРЕГИТЕ КНИГУ!**

**ОНА СЛУЖИТ НЕ ОДНОМУ, А МНОГИМ.**

Возвращайте книгу в  
срок, чтобы и другие  
могли воспользоваться  
===== ею. =====

1878  
2797  
492

2003

9/5  
2829

11  
11  
11

91.99  
- 5.99

10

~~157~~  
15732

ՍԻՐՁԱ ՏԵՐ ԿՍՐԿՍԵԱՆՆԵ

№ 1347

*Անթուր Վարդ*  
*Կր Արթուր Արթ*

# ԳԻՒՂԻ ՀՈՒՐՋԸ

Центральный Совет при Ленине

1933 г.

ԳՐԱԳՐԱՐԱՆ  
 Ս. ԿՍՐԿՍԵԱՆՆԵ  
 ԼՕՌԵՅԻՈՑ.  
 189 № 156.

ՇՈՒՇԻ

Տպարան Ա. Մ. Մահարեյի-Յակովլևի-Կոնյե  
1895

1347

~~1347~~

4271-2kk

421

Дозволено цензурою. Тифлисъ, 18 мая 1895 года.



1914

41

Типографія Мундусіакопова, въ Шушъ.

Ա.

Այստեղ էր որոշել անցկացնել ուսանող Միրաքեան ամառուայ արձակուրդը: Այստեղի օգն էր առողջարար գտել նա կազգուրելու իր յոգնած, թուլացած ջղերը: Գիւղական հասարակական կեանքով հետաքրքրուելու սիրահար, բարի, և ազնիւ ձգտումներով վառուած Միրաքեանը հիւրասիրութիւն էր գտել գիւղի ամենաազնիւ մարդու՝ ծերունի Թաթոսի տանը: Գիւղի այս նահապետը սիրում էր հիւրեր, սիրում էր նրանցից միշտ նոր, իրան անծանօթ բաների մասին տեղեկութիւններ իմանալ, սիրում էր խօսել, վիճել և միշտ աշխատել, որ, որ և է շօշափած հարց, մանաւանդ գիւղական մեռած կեանքի վերածնութեան, գիւղացու վիջակի բարւոքման վերաբերեալ հարց, ցանկալի վախճան ստանալ:

Միրաքեանը զարմացած տեսնում էր գիւղական այդ ծերունու մէջ մի ճշմարիտ և արդարադատ մարդու հոգի, մի ոյժ, որ միշտ ձգտում էր դէպի նորը, դէպի բարին, դէպի ընդհանուրի շահաւետութիւնը: Օրինակ, նա մեծ հետաքրքրութեամբ և հրճուանքով էր լսում, երբ ուսանողը պատմում էր նրան թէ՛ ինչպէս դոյութիւն ունին աշխարհի երեսին երկաթուղիներ, նաւեր, հեռագրալարեր, հեռախօսներ, ինչ մեծ զարկ է ստացել մարդու խելքը, որ ստեղծում է այդպիսի բաներ և որ աստիճան հեշտացել է մարդուս երթևեկելու, գործելու, ապրելու, գիւտեր, հնարներ, հրաշքներ կատարելու գործը: Եւ հին աշխարհի մարդկանց պէս նա չէր ասում թէ սատանայի գործեր են դրանք. ընդհակառակը, ցանկալի մտքեր էր յայտնում, թէ անրդեօք մենք և մեր գիւղերը ևս կարժանանանք այդ տեսակ բարիքների, աշխարհի այդ գիւրութիւնները վայելելու բախտին:

—Ո՛չ, այդ Եւրոպացիք են. դեռ մենք շատ լետ ենք այդ շնորհքից....

Ս.յսպէս ուսանողը գրաւուելով ծերունուց,

անյադ տենչանքով խօսում էր նրա հետ, հարցումներ էր անում նրանից, բացատրում էր նրա հարցապնդումները և միշտ բաւականութիւն պատճառող պատասխաններ էր ստանում մանաւանդ գիւղական կեանքին վերաբերեալ հարցերի մասին...:

Մի օր Միրաքեանը վշտացած տուն վերադարձաւ և սաստիկ բարկութիւնից սկսեց արագ մանզալ տան սրահում և ինքն իրան խօսել: Թաթոս-ապերը նկատելով ուսանողի վրդովմունքը հարցրեց.

— Ի՞նչ է պատահել, Սեդրակ, ինչո՞ւ ես նեղացած:

— Ի՞նչ պիտի պատահի. մարդ ուզում է միջից կէս լինի, երբ ասածը չեն հասկանում:

— Ո՞ւմ հետ էիր խօսում և ինչի՞ մասին էր խօսքդ:

— Ամենահասարակ փաստը չեն ուզում ընդունել... Դէ հիմա դու արի լաւութիւն արա սրանց:

— Ախր ի՞նչ բանի համար:

— Հէնց ամենատարրական մի բանը, օրինակ, իրանց զաւակների կրթութեան գործը չեն ուզում հասկանալ: Ասում ես հարկաւոր է

այսպէս լինել, հարկաւոր է այնպէս լինել—չը պէտք է գողանալ ուրիշից, ընկերի հարեանի սեպհականութեան վրայ չը պէտք է աչք տնկել, չը պէտք է գրկել, հայհոյել միմեանց, գրանք ձեզ բարոյապէս և նիւթապէս փչացնող միջոցներ են... Ի՞նչ իմանամ խօսում ես այսպիսի բարոյակրթական, խրատական խօսքեր, ծիծաղում են վրադ: Ասում ես հարկաւոր է ձեր երեխաներին ուսում տալ, որ նրանք գառնան ընտիր, պարտաճանաչ ժողովուրդ, ասում են սա էլ գլխներին մի նոր հարկահան չը լինի՞ եկած...:

—Համբերութիւն ունեցիր, Սեզրակ, մի տաքանար, գիւղացուն այդպէս հեշտութեամբ բան չի կարելի հասկացնել:

—Ախ, ի՞նչ անեմ ես... ակսր ամենահասարակ բանն էլ չը հասկանալ:

Այդ միջոցին սրահի միւս ծայրին պատրաստում էին ընթրիքի սեղանը: Ծերունին համեցէք արաւ ուսանողին ընթրելու և նրանք, Թաթոս-ապօր որդիների հետ միասին, բոլորեցին գիւղական պարզ ու համեստ սեղանի շուրջը:

Ընթրիքի ժամանակ շարունակուելով մի-  
 ևնոյն խօսակցութիւնը, ուսանողն աւելի բա-  
 ցուեց և ընդարձակեց իր խօսքը: Սեղանի  
 վրայ սլատահեցին և մի քանի գիւղացիներ,  
 որոնք հետաքրքրուել էին լսելու Սեղրակի  
 խօսակցութիւնը: Ընթրիքը վերջացաւ, իսկ  
 Սեղրակը դեռ շարունակում էր իր խօսակցու-  
 թիւնը:

— Լսեցէք, — ասում էր նա, — ես ունիմ այն-  
 սլիսի տխուր փաստեր մեր գիւղական ժողո-  
 վըրդի բարբերից, նիստ ու կացից, որ պատիւ  
 չէ բերում նոյն իսկ մարդկութեան անուանը:  
 Ինչ ասել է ուրիշի այգին մտնել խաղողը,  
 գինին, տանձ ու խնձորը գողանալ, երբ մըտ-  
 նողի իրան այգին ևս լիքն է այդ բարիքնե-  
 րով. ինչ ազահութիւն է զօռով գնալ խեղճ  
 հարևանի հողը վարել, ինչ քաջութիւն է  
 ուրիշի եզր գողանալ ծախել, հաւը, ոչխարը  
 մորթել ուտել: Այս ամենը տխուր փաստեր  
 են, բայց սլատահում են ձեր մէջ: Ես ձեզ  
 չեմ մեղադրում, որովհետև դուք գուրկ էք  
 ամենահասարակ բնազգումից. վայրենիութիւնն  
 աւելի է աճել ձեր մէջ, քան զգացմունքը:

Եւ այդ ամենը հետեանք է նրան, որ դուք ուսման հոտ չէք առել, որ ձեր հոգևոր հայրերը ընդունակ չեն եղել հասկացնելու ձեզ ձեր չարն ու բարին: Մարդիկ կարդալով աչք են բանում, լոյս են տեսնում, սև ու սպիտակը ջոկում են, գրաճանաչ են դառնում և տգէտ ու կոպիտ չեն մնում աշխարհի երեսին: Ամբողջ քաղաքակրթուած աշխարհի գլխաւոր հոգսերից ամենամեծը ուսումն է: Հաւատում էք ասածիս:

— Հաւատում ենք....

— Եթէ հաւատում էք, պէտք է ձեր բերանի պատառը կտրէք տաք և ձեր որդիներին գրաճանաչ անէք. պէտք է ձեր գիւղում ուսումնարան բանաք: Այս էր իմ այսօրուայ խօսքը ձեր գիւղացոյ հետ:

— Շատ լաւ ես ասում, Սեդրակ, — պատասխանեց Թաթոս-ապերը. — Ես ինքս իմ կողմից կատարեալ համաձայն եմ ձեզ հետ. քս առաջարկութիւնն ինձ չափազանց ուրախութիւն է պատճառում և ուրախութիւնից սիրտս բարախում է: Այդ կը նշանակէ, որ ես հասկանում եմ գործի օգտաւէտ և բարի լինելը:

Բայց բոլոր դժբաղդութիւնը նրա մէջն է, որ մեր ժողովուրդը չիմ կարծում թէ Հեշտութեամբ Համաձայնուի մեզ Հետ. ծանր հոգսերը նրա վրայ այնպիսի մի ճնշում են առաջ բերել, որ նա վայրենի մի բնութիւն է ստացել և անընդունակ դարձել այդպիսի բաների վրայ մտածելու: Այնպէս որ առաջ պէտք է խօսել, համոզել, սիրտը տաքացնել, որ յետոյ կարելի լինի հասկացնել նրան գործի նշանակութիւնը:

— Ուղիղ է քո ասածը, Թաթոս-ապեր: Գիւղական ժողովուրդը ինքն իրան շուտով խելքի չի դալ, և ես չեմ ասում թէ մէկէն մէկ կանգնենք ասենք թէ՛ փող բերէք ուսումնարան բաց անենք, չեմ ասում թէ՛ խօսել և հասկացնել, գործել և կատարել միաժամանակ պէտք է լինի. այլ խօսել շատ, կրկնել անդադար և այդպիսով նբանց սրտին մօտկացնել այն, ինչ որ այսօր չեն ըմբռնում, ինչ որ մի ծանր բեռ են համարում: Գուք տեսնում էք, որ, որ և է ցանաժ պտուղ, սերմ, կոշտանում վայրենանում է, կամ խեղդուելով որոմի և ասպառաժի մէջ՝ ոչինչ պտուղ չէ տալիս, եթէ

նրան թողնում են առանց ջրելու և հարկա-  
 ւոր խնամքը վրան տանելու: Այդ կոշտու-  
 թիւնը, այդ վայրենութիւնը համարւում է  
 բոյսի ոչնչացնող թշնամին, ինչպէս տգի-  
 տութիւնը մարդուս բարոյական և մտաւոր  
 զարգացման խոչընդոտ, որի դէմ մարդս անե-  
 րևոյթաբար ներքին կռիւ է մղում և աշխա-  
 տում յաղթել նրան...: Ձեր առաջ սլարդ օրի-  
 նակ է ուսումից, զարգացումից, որ և է ար-  
 հեստից զուրկ գիւղացին և դուք տեսնում էք,  
 որ նա անբան տրարածի նման խարխափում է  
 տգիտութեան խաւարի մէջ: Այդ տգիտու-  
 թիւնն է, որ այս բոպէին համարւում է ձեր  
 ներքին թշնամին և դրա դէմ պէտք է կուէք,  
 հզօր կերպով գէնք բարձրացնէք ձեր անձը  
 պաշտպանելու: Իսկ այդ կռիւն առաջ տանե-  
 լու համար պէտք է հիմնէք մի անձնա-  
 պաշտպանութեան լեւնարան, ուրիշ խօսքով—  
 պէտք է բանաք գիւղական ուսումնարան...:  
 Անբան արարածները միայն, որոնք բանականու-  
 թեան գատմունքից և արժանիքից զուրկ են,  
 չունեն բնութիւնից մարդուն շնորհուած ձիր-  
 քը, շնորհքը, տաղանգը: Իսկ մարդը: — Նա

ունի ձիրք ու խելք ամեն բան մտածելու, դատելու, կշռելու, լաւը վատից ջոկելու, չարն ու բարին իմանալու, աշխարհի տակ ու գլուխը քննելու: Եւ այդ ամենը նա պէտք է և ըստ կարելոյն սլարտաւոր է զարգացնել և կատարելագործել ուսումով: Երևակայեցէք, եթէ ես մանկութիւնից մեծացած լինէի անկիրթ, ինչպէս մի խեղճ գիւղացի, չէի կարող բացատրել ձեզ իմ միտքը: Պէտք է դուք համոզուիք ասածիս և հասկանաք գոնէ, որ տգիտութիւնը ձեզ բարոյապէս փչացնող թշնամի է համարւում և պէտք է միջոց գտնէք այդ թշնամու առաջն առնելու, որ աւելի մեծամեծ չարիքներ չը ծնէ ձեր մէջ: Համոզուեցէք ասածիս մէջ և այն ժամանակ խոյս չէք տալ գործից, կը ճանաչէք բարին և մի կողմից էլ դուք կաշխատէք համոզել աւելի տգէտներին, աւելի չը հասկացողներին...: Բոլորովին միտթարական չէ մեր այժմեան հատ ու կենտ ուսումնարանների դրութիւնը, որոնք այս ու այն գիւղում բացուելով կրկին և վերստին փակման վտանգին են ենթարկւում: Անմտիթարեմ կոչում նրա համար, որ նրանց բացումը

Ժողովրդի կատարեալ Համոզմունքի և գիտակցութեան արդիւնք չէ: Հաստատուն Հող պէտք է պատրաստել և այդ Հողի վրայ դնել որ և է Հիմնարկութեան, որ և է գործի Հիմք: Անմշակ Հողը տալիս է մեզ ցանած սերմի թօլլ ու նուազ բոյս, որի, սակայն, մեծամասնութիւնը խեղդուում է այդ Հողի վրայ աճող, խորարմատ բանջարների մէջ: Այդ բանջարները, այդ որոմները այն տգիտութեան օրինակներն են, որոնք փչացնում են մարդուն, խեղդելով նրա մէջ այն բոլոր ձիրքերը, որոնք բնութիւնից շնորհուած են նրան: Տգիտութիւնն է, որ ծնում է աշխարհիս երեսին զանազան անախորժ երևոյթներ. իսկ այդ երևոյթներն են խաբեբայութիւնը, գողութիւնը, սպանութիւնը և այն ամենը, ինչ որ վնասակար է Համարուում: Այդ բոլորը գործում է մարդս տգիտաբար, վայրենաբար, այդ գործողութեան ընդունակ աղօտ բնազգմամբը միայն, որովհետև գիտակցութեան Հողին, մարդկային խիղճը նրա մէջ թմրած մեռած է լինում և վայրենութեան տեղի տուած: Պէտք է զարթեցնել, պէտք է Հողի տալ այդ մեռած կեանքին:

— Հարկաւոր է դարձեալ, որ երկար խօսուի այդ մասին: Հարկաւոր է, իմ կարծիքով, որ քո խօսքի, քո խրատների նիւթը միայն ուսումնարանը չըլինի: Գիւղացուն անհրաժեշտ է ունենալ և խաղաղ, բարի, անգորր կենցաղ-խօկ այդ կենցաղն առաջ է գալիս նրա ասրուստի ասպհնութիւնից:

— Իհարկէ ես առիթ պէտք է ունենամ այդ մասին ևս խօսելու և դա կը լինի իբրև մի ժողովրդական դասախօսութիւն: Բայց ամեն բանի մայրը դպրոցն է, դպրոցը՝ որ ծանօթացնում է մեզ աշխարհի հետ, սովորեցնում է մեզ գրել կարգալ, ծանօթացնում է ազգերի, գիտութիւնների, մասնագիտութիւնների հետ, դարձնում է մեզ բարի մարդ, ազգութեան հարազատ անդամ, կառավարութեան հաւատարիմ հսկատակ և կատարելագործող, կենսագործող, քաղաքակրթող ժողովուրդ:

— Վիզը չը կտարուի մեր տէրտէրին, գըլխումը ձէթ լինէր դրանք բոլորը մեզ կը հասկայնէր, — խօսեց այն կողմից մի գիւղացի, խորը հառաչանք քաշելով:

— Շատ սլարզ է, որ քահանայից մեծ կախում

ունի կրթութեան և բարոյակրթութեան գործը. բայց քահանան էլ... քահանայ պէտք է լինի: Նա մեծապէս կարող է նպաստել գործին: Ժողովրդի կայրը, մանաւանդ գիւղական ժողովրդի, հոգևորականների ձեռքին է. հոգևորականը բարոյապէս մեծ իրաւունք ունի իր հօտի վրայ: Ժողովրդի հովիւը պէտք է ունենայ ազգու խօսք ժողովրդի մէջ. նրա յարգանքը, իր ազգեցութեամբ, շատ բարձր պէտք է լինի նրա առաջ և նա մի գործօն պէտք է լինի ժողովրդի բոլոր տարրական պահանջների իրագործութեան: Իսկ այդպիսի հոգևորականներ...:

— Մենք էլ ունինք մի քահանայ. բայց...

— Հարկաւոր է նրան տեսնել և խօսել հետը: Տեսնենք ինչ հայեացք կունենայ նա կրթութեան գործի վրայ և ինչ կարելի է սպասել նրանից:

— Տէրտէր է, էլի. իրան գործին հաստատ մարդ է...

— Ի՞նչպէս:

— Եկեղեցի է գնում, ժամ է ասում:

— Աշակերտներ ունի:

— Ունի:

— Քանի՞ Հատ:

— Մի տասնհինգ մօնթ ունի, որոնք նրա տան խոնարհ ծառաներն են և ամեն առաւօտ երեկոյ Հետը ժամ են զնուծ, փոխ են ասում, մի խօսքով տէրտէրի երեսը սլարզ են անում:

— Իսկ խօսել, քարոզել, մի բան Հասկացնել...

— Ձէ, չէ... դրանք շատ Հեռու են նրանից:

— Ափսոս, չունենք, Համարձակ պիտի ասեմ, որ չունենք արժանաւոր Հոգևորականներ: Մեր Հոգևորականութիւնը անկման ողորմելի աստիճանին վրայ է և դրա մեղքը մերն է, ազգինը, իսկ աւելի շատ՝ քաղաքացունը, որ մեր ազգի լուսաւոր և առաջագէժ դասն է կոչուում, կրթուած է Համարուում և զիտէ մեր ներքին ցաւերը: Այդ քաղաքացիների, կամ առհասարակ մեր ազգի մէջ միթէ չկան այնպիսի Հարուստներ, որոնք ուրիշ ազգերի դրամատէրերի պէս գումարներ նուիրեն, Ֆօնդ կազմեն յատկապէս ուսում տարածելու ժողովրդի մէջ: Ինչ էք կարծում, եթէ մենք ունենանք աւետարանը քարոզելու ընդունակ

քահանաներ, մեթէ մեր մէջ օտար քարոզիչ-  
 ներ կարող են մուտք գործել և շահ ունենալ:  
 Մեղաւոր է միևնոյն ժամանակ և մեր բարձր  
 հոգևորականութիւնը, որ չի տալիս մեր գիւ-  
 դերին ընտիր հովիւներ, աւետարանի մտքերը  
 ճիշտ և անսխալ քարոզելու ընդունակ վար-  
 դապետներ, ժողովրդի սրտի մէջ իր եկեղեցու  
 դաւանութեան սկզբունքները քարոզող և ամ-  
 րայնգող եկեղեցականներ, օտարամտ քարո-  
 ղութեան դէմ իրանց գիտութեամբ մրցելու  
 պատրաստ ուսումնականներ և որ ամենից  
 մեծն է, ժողովրդին, մանաւանդ գիւղական  
 այս ողորմելի ժողովրդին տգիտութիւնից և  
 խաւարից դէպի գիտութիւն, դէպի լոյս տա-  
 նող հիմնարկութիւններ, որոնց մենք ուսում-  
 նարան ենք անուանում և որից ծնում են  
 համ ուսումնական քահանաներ, համ ընդու-  
 նակ վարդապետներ, համ քաղաքակրթուած  
 ժողովուրդ, համ գիտակցութեան աստիճանին  
 հասած հասարակութիւն: Ազգի երեսը սլարդ  
 են անում ուսեալ քահանաները, մանաւանդ  
 կրօնական տարակուսանքների սլարդաբանու-  
 թեան և կրօնական վիճաբանութեան ժամանակ,

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՅՈՒՆԱՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ  
 №

և ոչ թէ մեզ նման գլուխները քաշ գցում, լեզուները լալկում և խօսք չը գտնելով պատասխանելու հնազանդում իրան դիմացինի առաջ: Ընդհանրապէս առած մեր հոգևորականութիւնը կազում է այդ արժանիքն ունենալու մէջ: Մասնաւոր, անհատական բացառութիւններն ընդհանուրին միխիթարութիւն չեն պատճառում: Նրանք մնում են բացառութիւններ, որովհետև մեծամասնութեան լեզէօնական ոյժի տակ թուլանում են, թէև չեն կորչում, իրանց գործելու, առաջագիմելու ասպարէզի մէջ: Իսկ այդ մեծամասնութիւնը: — Աստուած հեռու տանէ. թերուս, տգէտ, կամակոր... Հոգևոր ուսման և աստուածային գիտութեան ամբողջ պաշարի լրումը տեսնում են Սաղմոս Ժամագրքի և Աւետարանի շուրջը միայն...: Այդ եղած հոգևորականութեան բարձր դասը, որի ձեռքումն է հոգևոր գործերի ղեկը, քաղաքում նստած, աչքը միայն իր քթի տակ եղած ժողովրդին է տեսնում, նրա վրայ է մտածում, բաւականանալով միայն, որ քաղաքի ուսումնարաններում կարգում են մի քանի գիւղացի երեխաներ: Նա կարծում է

1914

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ  
 Լուսինյան փողոցի 10-րդ համարում  
 ՀՍԽՀ-ՍՍՐԱ,  
 Երևանի մարզի կենտրոնական գրադարանի ԿԵՆՏՐՈՆ

Թէ գրանով կատարած է համարում իր սլարաքը  
 և լրացրած գիւղական մանուկների ուսման  
 ծարաւը: Տես ինչքան անտարբեր են այն մար-  
 դիկ, որոնցից կախուած է գործի կատարումը:  
 Այլ գիտէ, քանի՜ հանճարներ այս գիւղացի-  
 ների մէջ անյայտանում կորչում են... Ինչ-  
 պէս չը զոհուել այդ հանճարները յայտնա-  
 գործելու մէջ, ինչպէս չը զոհուել ժողովրդի  
 նախապարաստութեան: Թո՛ղ մեր ոյժերը  
 գործ դնենք միայն գործի սկզբնաւորութեան  
 վրայ, այնուհետև մեր սերունդները տեսնելով  
 մի հարթ ճանապարհ՝ առանց դժուարութեան  
 առաջ կը տանեն իրանց գործը:

— Եւ մեծ փառքն այդ զոհաբերութեան  
 անկասկած նա կը տանէ, ով առաջին անգամ  
 գործի առաջին քայլն անելով՝ կը հարթէ փշոտ  
 ճանապարհը, -- մէջ մտաւ ծերունու ամենու-  
 վերջին որդին՝ Ասկանը, մի քաջ և հօր բնու-  
 թեամբ հաստատակամ երիտասարդ, ուսման  
 հոտ առած և կարիքն զգացող, որ ուսանողի  
 խօսակցութեան բոլոր ժամանակ ուշադրու-  
 թեամբ լսում էր նրան:

— Ինչ գիտես, Ասկան, որ մեր ծուլութիւնից

և անհոգութիւնից օգուտ քաղելով «աւետա-  
 րանական» կոչուած ընկերութեան քարոզիչ-  
 ներն ամեն ազգի մէջ անխտիր, մանաւանդ  
 մեր Տաճկահայաստանի և Պարսկահայերի մէջ,  
 խուլ անկիւններում, յանուն քրիստոնէութեան,  
 ուսումնարաններ են բաց անում, ձրի դաս,  
 ձրի գրքեր են տալիս և աղքատ ժողովուրդը  
 գիմում է նրանց իր որդոց ուսման ծառուը  
 լցնելու: Ես այդ համարում եմ մի ապտակ,  
 մի բարոյական հարուած, որ նա տալիս է մեր  
 երեսին: Աւելի խորը չեմ գնում բացատրելու  
 նրանց բուն նպատակը, բայց ասն տեսնեմ,  
 ամօթ չէ մեզ հայերիս, ամօթ չէ մեր միլիո-  
 նատէրերին, երբ նրանք լսում են, որ մեր երե-  
 խաների ուսման հոգսը օտարներն են ուզում  
 քաշել և իրանք այդքան անտարբեր ու թմրած  
 են մնում: Բայց այս ամենը, զարձեալ կրկնում  
 եմ, շնորհիւ մեր տգէտ հոգևորականների:  
 Եթէ իր կոչման բարձրութեան վրայ կանգ-  
 նած հոգևորական ունենանք, որտեղից կարող  
 են մեր մէջ աւետարանական միսիօնարներ  
 բուսնել և ինչ կարիք կունենայ մեր ժողո-  
 վուրդը լսելու նրանց քարոզը: Բայց ո՛ւմ դէմէ,

սեմնից լսէ նա խօսք, քարոզ, աւետարանի  
 մեկնութիւն, բարոյական խրատներ, երբ, եթէ  
 չափազանցութիւն չը լինի, գիւղական ժողո-  
 վուրդն անգամ մըցում է բարձր կանգնել իր  
 հոգեւորականից ընդհանուր զարգացմամբ: Այս  
 ամենից յետոյ... հարկաւոր է տեսնել ձեր  
 քահանային թէ թնչ արարած է նա և թնչ է  
 անում ժողովրդի մէջ, թէ և, համոզուած եմ,  
 որ նա ևս սլատկանում է այն լէգէօնական  
 դասին, որն իր մէջ բովանդակում է անթիւ,  
 անհամար տգէտ հոգեւորականներ. հոգեւորա-  
 կաններ, որոնք, գիտեմ, փայլուն ոսկիների  
 լիքը տոպրակներով են արժանացել այդ մեծ  
 շնորհքին, այդ պատասխանատու պաշտօնին,  
 և արժանացել են՝ միայն իրանց գոյութիւնը  
 սլահսլանելու, քան թէ մտածելու ժողովրդի  
 հոգեկանի և բարոյականի մասին:

—Վէ ուր է, որ մեր տէրտէրը ձեզ չափ  
 իմանայ՝ էլ մեզ թնչ դարդ... այն ժամանակ  
 բազդաւոր կը լինինք լսելու այդ տեսակ խօս-  
 քեր, որ դուք էք խօսում և որից մեր հոգին  
 ջրով լցնում է...:

Յայտնեցին ամեն մի տեղից այն բազմաթիւ

ունկնդիրները, որոնք հետաքրքրուելով եկել էին լսելու անձանօթ հիւրի— ուսանող Միրաքեանի սիրտ բաբախեցնող խօսքերը:

—Նրեկոյեան կը կանչենք տէրաւերին, կը տեսնէք:—Սասց ծերունին:

## Բ.

Երիկնադէմին էր:

Արեգակը քիչ էր մնում, որ խուժի քամակն անցկենայ և աշխարհը պատէ թարձր խաւարով: Նրա վերջին շողերը կանաչ հանգերի, տերեկալած ծառերի, շաղակալած խոտերի և անուշաբույր ծաղիկների վրայ ընկնելով՝ հազար ու մի գոյներ էին ցոյց տալիս: Օրուայ այս ժամին գիւղի հարս ու աղջիկ արեգակի այդ հազարերանգ շոգակաթերի վրայ հազար ու մի գուշակութիւններ էին անում...:

Այդ միջոցին երկու հարս, կժերնին ուսերին դրած, իրար էշխով զարբ մտած, աղբիւրից տուն էին գառնում: Կէս ճանապարհին նրանք դէմ եկան գիւղի տակի բանջին և կժերնին վայր դրին, որ մի քիչ հանգստանան:

Երևի նրանք էլ ուզեցին զուարճանալ և ուրախանալ բնութեան այդ հրաշագեղ տեսարանի դիւթիչ ազդեցութեան տակ և մի բոսկէ իրանց բնտանեկան ցաւ ու հոգսերը ցրուել բնութեան գեղեցիկ վայրերում, եթէ յանկարծ նրանց աչքին չընկնէր մի երիտասարդ, որ մի երգիկի ծայրի կանգնած էր, ձեռքերը խշխշան թաւթայ արխալուղի վրայ, արծաթէ գօտու տակից խաչաձև անցկացրած: Նա իր հագուստով ամենից շուտ էր աչքի բնկնում և զանազանում էր միւս գիւղացիներից. աւելի նոր էր, աւելի վաշելուչ դիրքով և գեցքով: Իսկ շարժումը.— ուզում էր ջանին վրայ տրաքուի...:

Դա Չատուն տղայ Սարգիսն էր— Գ. գիւղի արժանաւոր սրգիներէից մին:

— Ս. Հուռ, նա չէ:

— Նա է, հա՛, Նազանի:

— Տեսնում ես էլի, ինչ տղայ է գառել. անունն էլ ասում են փոխել է Սերգէյ դրել: Ի՞նչը բուսաթն ասես շիմշատ լինի: Օտարութեան ջուրը տես ինչպէս է վեր կալել, փոխուե՛լ, սիրունացե՛լ...:

— Գիտե՞ս ինչ թաշախուստին տղայ է:

— Թաշախուստին է երևում, բայց տակ ու գլուխը...:

— Տակ ու գլուխը ո՞րին ես ասում. դու մի արի տես ամեն օր վարաղի սապնով նրա ձեռները լուանալը, իրիկուն առաւօտ չայ խմելը, ծանր-ծանր ու մեծ նստել վեր կենալը, կէսօրին հացից հտ քնելը, օրը երեք անգամ երեսը լուանալը, գլուխը սանրելը, շորերը չոթք տալը: Ասում են երեք ձեռք հենց բոխչամիջի շոր ունի: Գլխին ոռուսի թասակը տեսնո՞ւմ ես, օրը տասն անգամ կզրօկը լսյգտում է: Մի ջուխտ չաքմա ունի, էլ տանը սլատը ծակերում դմակի կտոր չի թողել, բոլորը նրա վրայ է գլխացրել: Շաբաթը երկու անգամ դալլաքը կողքը կտրած հենց երեսն է վեր անում: Քանի՞ մինն ասեմ: Միթէ սա քիչ թաշախուստ է:

— Ա՛սւ է, լաւ, շատ լաւ է: Իբան հացը կերել է պրծել: Ա՛խջի, ա հուռ, աղջիկ ուղելի հօ կամք չաւնի:

— Ի՞նչ աղջիկ, ի՞նչ գատ: Մեր գիւղում նա ի՞նչ աղջկան կը հաւանի: Քիթին հաւան չե՞ս տեսնում որտեղ է:

— Բ՛ա՛հ, դրա տունը չը քանդուի, դա ի՞նչ  
դարձի տէր է, որ այդքան արթ միշ է արել:

— Զաւօղչի է, զաւօղչի:

— Եանի մեր թթի զաւօղների նման:

— Չէ՛, այն ուրիշ տեսակ զաւօղ է, անունը  
չեմ իմանում: Միայն ասում են տարին հինգ  
հարիւր մանէթ գօնլուղ է ստանում:

— Բ՛ա՛հ, դրա տունը չը քանդուի, էլ ո՛ւր  
է եկել:

— Եկել է հօրն ու մօրը տանի:

— Վ՛ո՛ւլ, ի՛նչպէս կարող են դնալ այն կրկու  
պառաւները... ո՛ւր է տանում նրանց այդ  
պըչրկտուրի տղան:

— Իրան կենում շհարը, Թեմիրխանշուրա...:

Նրանց խօսակցութիւնը դեռ չէր վերջա-  
ցել և գուցէ աւելի երկար շարունակուէր,  
եթէ Թաթու-ապօր տղան՝ Ոսկանը և ուսանող  
Միրաքեանը նրանց գէմ յանդիման դուրս դա-  
լով՝ արգելք չը լինէին նրանց ազատ խօսակ-  
ցութեան: Ընթրիքից լետոյ Ոսկանը նրան  
դուրս էր բերել գէպի գիւղի բարձրաւանդակը,  
ցոյց տալու նրան անձանօթ տեսարանները:

Հարսները նրանց տեսնելով, լաչակնին

երեսներին քաշեցին և շարունակեցին իրանց ճանապարհը:

Ուսանողի և Ոսկանի հայեացքից ևս չը վրիպեց խօսակից հարսների հերոսը, որն արդարև իր տարազով զանազանուժ էր միւս գիւղացիներից: Միրաքեանը նրան տեսնելով՝ նրա սիւ և ինչ գործի տէր լինելը հարցրեց Ոսկանից:

— Տասը տարի է օտարութեան մէջ, — պատասխանեց Ոսկանը. — անցեալ տարի եղբօրն սպանել են թուրքերը, հայրն ու մայրը քսան անգամ գրել են որ գալ իր եղբօր արիւնը պահանջէ, չի եկել: Հազիւ ահա բերել են տուել և չի էլ ուզում եղբօր դատի համար բերան բանալ. այլ ուզում է տուն տեղ ծախել, հօրն ու մօրն էլ վեր առնել գնալ էլի օտարութիւն:

— Երևի այնտեղ գործը շատ աջող է գնում...

— Ինչ աջող, քաժով բնկած է այնտեղ. նա էլ ասում են իսկի հայ չէ...

— Հայ չէ: Մի չը գնանք գրան խօսացնենք:

— Քնանք:

Նրանք խօսելով մօտեցան Չատուն տղին

և բարեկեցին: Ոսկանը ծանօթացրեց նրան Սեզրակի հետ և սովորական հարց ու պատասխանից լետոյ ուսանողն անմիջապէս սկսեց հարց ու փորձի ենթարկել նրան: Նա հարցրեց.

— Ի՞նչպէս է թւում ձեզ գիւղացու գրութիւնը, պարոն Սարգիս:

— Ի՞նչ կողմից:

— Նրան ապահով ես համարում՝ դիցուք Հէնց՝ տնտեսապէս:

— Շատ հեռու հարց ես տալիս, Սեզրակ, — մէջ մտաւ Ոսկանը. — այդ հարցը նա չի բմբռնիլ և չի էլ հետաքրքրուիլ գրանով: Նրա ուշ ու միտքը ո՞վ է իմանում որտեղ է:

— Ի՞նչպէս թէ որտեղ է, գիւղացի չէ՞, գիւղացու զաւակ չէ՞...

— Շատ էլ... որ սիրահարուած է՝ նա ի՞նչ գաղափար կունենայ և ի՞նչ հետաքրքրութիւն գիւղացու տնտեսական գրութեան վրայ:

Սարգիսը, որ լուռ մեայն լսում էր իր վերաբերութեամբ այդ խօսքերը, յարձակուելու չափ բարկութեամբ հարցրեց Ոսկանին.

— Որտեղ է ուշ ու միտքս. զու շնտ ես հասկանում:

— Սիրահարութեան վրայ:

— Որ ի՞նչ, ի՞նչ ես ուզում ասել դրանով:

— Ուզում եմ ասել որ քեզանից մենք խէր չունենք:

— Մի չարանաք, եղբայրներ, — ասեց Սեդրակը, — ամօթ բան չէ ուշ ու միտքը սիրահարութեան վրայ լինելը: Դա ևս մի շրջան է, որ կատարւում է մարդկային կեանքում:

— Բայց ի՞նչպիսի շրջան. իր շրջանից դուրս այդպիսի բան գործել վայել է մարդուս:

— Ձեմ հասկանում...

— Մեր աթալարի մի գեղեցիկ խօսքը տեղ է գալիս այստեղ լիշելու, որ ասում է «ճպատդ քո քոյիցդ կտրի»: Հիմա այս մարդն ուզում է կին առնի, բայց իր գիւղն ու գիւղացին, իր գիւղացու աղջիկը թողած, հազարաւոր վերստեր հեռու է գնում և այնտեղ է ընտանեկան բաղդ որոնում:

— Բաս սրտեղ որոնեմ, ձեր գիւղում:

— Մեր գիւղը և ձեր գիւղը չէ:

— Մեր գիւղն է, բայց աղջկէրբը:

— Ձեա հաւանում:

— Ձէ:

— Ինչո՞ւ, քեզանից պակաս մարդու աղջկերք են, լայեղ չես տեսնում նրանց:

— Տգէտին, իմարին, անգործին մարդ ի՞նչ լայեղ տեսնի:

— Մեր գիւղի աղջկերքն են անգործ...

— Հա՛, հենց ձեր գիւղի:

— Եթէ անգործ է մեր գիւղի աղջիկը, մեր գիւղի կի՛նը, բաս ո՞վ է իր մշակ տղամարդի ետևից ոտաբորիկ, խուրջինը հացով լիքը շալկած, տանից մինչև հանդն ամեն օր հաց տանում, քաղհանի ժամանակ արտերի միջի որոմը քաղում քաղհանում, իր տղամարդին օգնում, մորեխ եկած ժամանակ գնում մորեխը կոտորում: Ո՞վ է հնձողի ետևից թափած հասկերը մէկ մէկ հաւաքում, փնջում քսակը լցնում, մշակներին օգնում, խուրձերը կասում, շատ տեղ ինքը հունձ անում, սալը բեռնելուն օգնում, կալը բերում թալաներ կիտում: Ո՞վ է երեխան ճիտը կասած արևի տաքում խանչըխորով գալիս, կալը կասում, աշան անում, քամելուն օգնում, ցորենը շուարում, շատարարում, բեռնում և տուն ճանապարհում: Ո՞վ է աղուն պատրաստում,

ջաղաց զրկում, կամ ինքը տանում, ծմակից շալակով ճախ կրում, թոնիրը վառում, ալիւրը մաղում, խմորը հունցում և թոնրի կողքին ջուխտ ծնկան վրայ չոքած հաց թխում: Ա՞յլ է թթարաղի ժամանակ թթի շալը բռնում, թուլթը տեղաւորում, կամ խաղողի ժամանակ խաղողը քաղում, հնձանը լցնում, ճմռում, շիրան քամում, կթերը լցնում, տուն կրում: Այս դեռ դրսի դորձը: Հիմա արի դու նրա տան դորձը տես:

— Հերիք է, հերիք, Ոսկան, այդ բոլորը գիտենք, — ասաց Սեդրակը:

— Խնդրում եմ... թող այս պարոնին մի լաւ ծանօթացնեմ այն կճէպի հետ, որի միջից դուրս է եկել ինքը: — Գիւղացու «տղէտ» կինը չէ՞ արդեօք, որ գարունը բացուելուն պէս մեծ խնամքով շերամի սերմ է դնում և իրան յատուկ փորձերով պահում, պահպանում, մեծացնում, ցախ հանում, բոժոժը քաղում, սերմացուն ջուկում, արբեշում քաշում, թել մանում, տան — աղջկանց, տղէքանց և տղամարդկանց համար շոր ու կարկատան անում: Գիւղացու «յիմար» կինը չէ՞, որ կովերը կթում

է, մածուն պատրաստում, խնոցի հարում, կարագ դուրս բերում, թանը չորացնում, չորաթան շինում, իւզը հալում կարասները լցնում, կերակուր եփում, օրը երկու անգամ կուժն ուսին աղբիւրից ջուր կրում, ատեն ու դուռը աւելում, տանեցոց բոլորի շորը կարում կարկատում, լուանում, եկած հիւրին իր տան բարիքներով լիացնում: Գիւղացու «անգործ» կինը չէ, որ իր հարսնացու աղջկան համար բաժինք է պատրաստում, ամեն ինչ իր ձեռքով գործում— թէ գորգ ու կարպետ և մեզար մափրաշ, թէ եօրղան դօշակ և ջեջիմ ու քսակ և առհասարակ ինչ որ պարտական է տալունա իր աղջկան, տան մեծի ու փոքրի համար շոր ձևում, կարում, բուրթ գզում, մանում, ջրլիահոր հինում, չուխայ գործում, դուլբասանում, ընկեր հարեանի նեղ օրին հասնում, ուրախութեանն ուրախակից լինում, վշտին վշտակից... Էլ ասեմ: Ապա, այս ամենն անում է գիւղական տնակից դուրս եկած աղջիկը, գիւղացու կինը, որ ձեր աչքում ազէտ և անգործ է երևում: Այդ դեռ կինն է անում. իսկ տղամարդը: — Նա քեզ պէս մաքուր չի ման

գայիս. նա խշխշան հագուստով չի զարմացնում. նա մինչև քիթը ցեխում խրուած մշակութիւն է անում...:

— Լաւ, լաւ, գիտենք որ նա էլ իր գործն ունի, — ընդմիջեց Սեդրակը. — առանց այդ էլ դու հարցը շատ ընդարձակեցիր...: Կնչ տեղից ուզում է թող աղջիկ առնէ Սարգիսը. դա մի մեծ յանցանք չէ: Յանցանքը նա է, որ նա մոռանալ իր հայրենիքը, չը լիշէ, որ գիւղացու տնտեսապէս և բարոյապէս քայքայուող վիճակը մեծ հոգածութեան կարօտ է, և ինքը կարող լինի այդ հոգսերի թեթեացմանը նստատեղ, բայց անտես առնէ...: Յայանի բան է, պանդխտութիւնը մեր ազգի ամբողջութեան և ոյժի քայքայման ամենավնասակար միջոցն է, որին անգիտակցաբար և առանց հեռատեսութեան գիմում են մեր գիւղական երիտասարդներից շատերը: Բայց երկու տեսակի կարող եմ բաժանել ես այդ պանդխտութիւնը. մին ժամանակաւոր է, որ մարդ կարող է գնալ, աշխատել և վերադառնալ իր տունը: Դա թէև փոքրադոյնն է իմ լիշածից, բայց դարձեալ չարիք է. չարիք, որովհետև գիւղի երիտասարդն

իր ժամանակը և ուժը վատնում է ուրիշ տեղ: Նա իր գիւղում շատ դործ ունի անելու.— ահագին դաշտեր, արգաւանդ հողեր, բանջարանոցներ, անտառներ, ջրեր, մարգեր և այլն առատ արգիւնաբերութեան աղբիւրներ են խելօք գիւղացու համար: Իսկ պանդխտութիւն լաւիտեան լեռ չը դառնալու մտքով, դա առաւել չարագոյն է և դատապարտելի, որին գիմելը ո՛չ մի օգուտ չէ բերում մեզ համար, բացի անգարձ կորուստից, կորուստ աւելի ցաւալի կերպով. որովհետեւ գլխաւորապէս լաւ ուժերը հեռանում են գիւղից, ընդհանուր, հաւաքական ուժը պակասում է, երկրագործութիւնը և առհասարակ գիւղական ամեն մի արգիւնաբերութիւն կորցնում է իր սխտեմատիքաբար զարգացումը: Այդպէս, գիւղացոց շատերը հետեւում են իրանց համշինականի բռնած ընթացքին, մնացածներն էլ ծուլանում են և այդ ամենի հետ խախտում է գիւղական կեանքի միացեալ ուժը— արգիւնաբերութեան կատարելագործութիւնը և բարոյականութեան զարգացումը...: Իրաւ որ գիւղացու կիներ մեծ նեցուկ է իր ամուսնուն և մեծ

կապ նրան կապելու գիւղական գործի հետ: Եթէ այդ կինը լինի ծոյլ, անգործ, ես համոզուած եմ, որ նրա տղամարդը կնոջից աւելի վատթար կը լինի: Բայց կինը իր ժրաջանութեամբ հոգի և եռանդ է ներշնչում ամուսնուն: Այդ տեսակէտից բազդաւոր է գիւղական տղամարդը: Եթէ Սարգիսը հաւատացած է և խորին համոզմունքով է ասում, որ գիւղական կինը անգործ է, ծոյլ է՝ չարաչար սխալում է. իսկ եթէ պատճառ է բերում նրա տգիտութիւնը, այդ դէպքում պէտք է չափել և կշռել նախ իր գիտութեան և ընդհանուր զարգացման չափը և ապա...:

— Հասարակ խառատ է...:

— Խառատ լինելը ոչինչ:

— Ինքն այս գիւղում սնուած, մեծացած մարդ է, ո՛չ գիր գիտէ, ո՛չ կիրակոս:

— Ի՞նչ գիտես, — մէջ մտաւ Սարգիսը. — հենց խելքիդ զօռ ես տալիս: Ո՞վ չէ գիր գիտում, դու շատ ես հասկանում. երկու տարի այնտեղ գուր տե՛ղն եմ վարժապետի փող տուել գրաճանաչ գառել, որ ասում ես գիր չը գիտէ:

— Աւելի ուրախալի երևոյթ, որ այդ

Հասակումդ զգացել ես գրադիտութեան փափագ  
և գրել կարգալ սովորել, — ասաց Սեդրակը. —  
ուրեմն ինքդ կենդանի օրինակ պէտք է լինիս  
այս անգրագէտ գիւղացոց, պէտք է Հասկաց-  
նես սրանց աւսման կարեւորութիւնը, պէտք է  
քո արհեստը տարածես գիւղացոց մէջ, պէտք  
է գլխիդ հաւաքես գիւղի ջահէլներին և յոր-  
դորես նրանց, որ ծով չը սովորեն, գործեն,  
վարեն, ցանեն, տնկեն, մշակեն...:

— Ե՛, հենց ասում ես, բայց չես իմանում,  
թէ ինչ կալ մէջ տեղ:

— Ի՞նչ կայ:

— Ախր ես ի՞նչ սրտով գիւղացուն հետ խօ-  
սեմ և նրա բարին ցանկամ, որ գլխիս շան  
օլինը դրել են:

— Ի՞նչ օլին են դրել:

— Գաւառապետին գանգատուել են և ինձ  
այնտեղից ոտով բերել տուել. բաս դա մոռա-  
նալու բան է, որ ես մտքիցս քցեմ և նրանց  
համար լաւ բան մտածեմ:

— Ինչո՞ւ, առանց պատճառի ի՞նչպէս բերել  
կը տան:

— Ի՞նչ պատճառ պէտք է լինի:

— Հինգ տարուան հարկը մնում է... օրէնքն է բերել տուել, օրէնքը և ո՛չ թէ գիւղացին, — ասաց Ոսկանը:

— Հա՛... ուրեմն դուք այդ բանից զուր տեղն էք վիրաւորուել: Ի՞նչ, եթէ աշխարհ տեսած մարդ էք, ամենից շուտ պէտք է հասկանաք թէ՛ ինչ ասել է տէրութեան հարկ և հսկատակութիւն: Եթէ դուք օտարութիւնից ամեն տարի ձեր գլխահարկն ուղարկէիք, հասարակութիւնը, յանուն օրէնքի, այդպէս խիստ չէր վարուիլ ձեզ հետ և այսօր դրա պատճառը դուք գիւղացուն չէիք բռնիլ և չէիք սառչիլ նրանից, որն այս դէպքում միանգամայն անմեղ է: Ինչպէս երևում է, այնտեղ օտար աղջկայ վրայ սիրահարուելը էլ առաջ է եկել հենց այդ հանգամանքից և դուք անտեղի կերպով կամեցել էք մի տեսակ վրէժ լուծել ձեր գիւղացիներին: Այդ դէպքում դուք չարաչար սխալուում էք: Ես կարծեցի թէ ունեցած սիրահարութիւնդ սիրոյ խորին համոզմունքի արտայայտութիւն է: Բայց այդպէս չէ երևում: Օտարը ձեզ համար կը լինի միշտ օտար և նրա հետ ջերմագին սէր ու միութեան կապ չէք

կարող ունենալ, որովհետև շուտով կանցնէ սրտիդ ժամանակաւոր բարկութիւնը, որ տածում էք այժմ դէպի ձեր գիւղացին, և դուք չարաչար կը զոջաք ձեր քայլի մէջ...:

— Այսինքն, ինչպէս ռամկօրէն ասում են, «ջորուն բիհրը որ դուրս պրծնի, իրան քամակին կը դիպչի»:— Ասաց Ոսկանը:

— Հ'ը, հ'ը, լեզուդ քեզ պահի, Ոսկան, ինչո՞ւ ես ուրիշի պատիւը շօշափում:

— Համբերեցէք, տաքանալով բան չի լինիլ... Հանդարտացրեց Սեդրակը:

— Ախր ինչպէս չը տաքանաս... ինչ մեծ պատուի ես արժանացած, ասա, որ պատուից էլ խօսում ես: Այսքան տարի է օտարութեան մէջ ես, քո կողմ ու բէգառը ս'իլ է քաշում, մե՞նք չենք քաշում. դա էլ մեր արած լաւութեան շնորհակալութիւնն է, որ անում ես: Ի՞նչ ենք ասում քեզ, աչքդ չենք հանում խօ, ասում ենք տուն ունիս, տեղ ունիս, բաղ ու բախշա ունիս, հող ունիս, այստեղ վեր ընկիր, ընկիր, կեր, մի թողիր, որ ուրիշները տէրութիւն անեն, վատ ենք ասում: Ասում ենք ծուխդ քոռ մի անիր, ինչ որ թողնես թուրք

կալուածատէրն է տէրութիւն անելու, թուրքին վատ մի սովորցնիր, եթէ մինչև հիմա տարին մէկ երկու են եկել, այսուհետև իսկի այստեղից դուրս չեն գալու, վատ ենք ասում: Ասում ենք դու գնում ես, քեզ նայած իմ եղբայրս էլ է գնում, զիւղը դարտակում է, ժողովուրդը ծուլանում է, անգործ է սովորում, աղքատանում է, վատ ենք ասում: Փառք Աստուծոյ, քոռ աչքովդ տեսնում ես ամեն ինչ. ինչո՞ւ չես զգում, ինչո՞ւ չես համոզում, որ այստեղ շատ գործ կայ անելու, քան մեր կեանքը մաշող, կազմալուծող օտարութեան մէջ...:

— Ձեմ ուզում, զօռով կապելու ես պահես ինձ:

— Ձես ուզում, ջհանդամը գնա: Իսկի եկած էլ չը պիտի լինէիր: Հալբաթ տուն-տեղդ կը ծախէին և հարկդ կը վերցնէին: Այն ժամանակ թող պառաւ ծնողներդ դրսումը մերկ, անօթի մեռնէին, տեսնեմ նրանց մեղքի տակից ի՞նչպէս պէտք է դուրս գալիր:

— Ապա՞ ինչո՞ւ համար եմ պնդում, Ոսկան, որ ուսումը միայն կարող է փրկել այս վերքերը, ուսումը կարող է տալ պարտաճանաչ ժողովուրդ և ուսման հետ ուսումնական

քահանան կարող է կրթել այդ ժողովրդին: ժողովրդի մէջ հասկացող մարդը այս սլարոնն է երևում: Որ սա այսպէս է խօսում, մնացածն ինչ պիտի սսեն:

— Դրանով դու մի յուսահատուիր, Սեզրակ, մեր ամենավերջին ռամիկ գիւղացին շուտ կը համոզուի դրանից. դա օտարութեան մէջ աւելի է վայրենացել և բթամտացել, քան մեր ռամիկը իր մաճի ետեից ընկած: Դրանց ծնողական, եղբայրական, որդիական գութը օտարութեան մէջ է մեռնում: Դրանք հեռանալով մայրենի հողից, մոռանում են ամեն քաղցրութիւն, որ վայելել են այդ հողի վրայ, մոռանում են մեր հողն ու ջուրը, մոռանում են մեր դաժան, բայց քաղցր աշխատանքը և հեշտասիրութեան ետեից են ընկնում, թեթև ու հեշտ գործեր կատարելով և ամսավերջին իրանց մի քանի բուբլի ռոճիկն ստանալով:

— Իրակ, ինչպէս կարելի է թողնել, որ այս արգաւանդ հողերն անմշակ մնան, որ անտառները փչանան առանց օգտաւէտ լինելու մի բանի, որ այս ջրերը զուր անցնեն առանց բանջարանոցներ ոռոգելու և առատ ընդեղէններ

ու պտուղներ տալու: Յանկութիւն ունենաս  
գիւղում նստելու գործ չը ճարես:

— Հագորդ...:

— Չըկայ, չըկայ. դարտակ խօսքեր են...:

Գլուխս չի մտնիլ:

— Հաւատացած եմ, որ պիտի զղջաս վերջը  
և պիտի համոզուես, որ գիւղն է քեզ հաց  
տուողը. թէև կամակորութեան մի հաստ մեխ  
տնկուել է գլխումդ... ասաց ուսանողը և  
դարձաւ դէպի Ոսկանը. — Գնանք...:

Նրանք վերադարձան տուն:

Ուսանողը ճանապարհին խորը մտածում  
էր: Նա կարծես փորձութեան բոլի մէջ աշ-  
խատում էր վերլուծութիւններ անել...:

#### Գ.

Թաթոս-ապօր բնութիւնն էր իր յարկի  
տակ ընդունել այդ տեսակ հիւրեր և սիրով  
կատարելով նրանց բարի և հանրօգուտ առա-  
ջարկութիւնները, նպաստել նրանց գործով,  
լիացնել իր ձեռքովը եկած հիւրասիրութիւն-  
ներով, մարդիկ հրաւիրել հիւրի գլխին,

ճաշկերույթներ սարքել և պատուաւոր կերպով ճանապարհ ձգել: Նրա տանից միշտ անպակաս էին զանազան բարձրաստիճան և բարձր համարում ունեցող անձինք, որոնք թէ պաշտօնական և թէ անձնական գործերով այցելելով զիւզը, հիւրասիրութիւն էին գտնում ծերունու տանը: Նրա տունը, ինչպէս կասեն, դրանց քանդուածն էր: Բայց և այնպէս այդ մարդը չէր խնայում մեծամեծ ծախքեր անելու, ծախքեր՝ ո՛չ միայն հիւրեր պատուելու, այլ և աղքատներին ու անճարներին օգնելու: Եւ ինչքան նա շուայլում էր իր հիւրասիրութիւնների և բարեգործութիւնների մէջ, այնքան Աստուած տալիս էր նրան, այնքան Աստուած լցնում էր նրա տունը: Նրա գութանը հերկում, վարում էր Գ-ի ընդարձակ հանգերում: Շորս չափահաս որդիքը նրա տան մի-մի սիւներն էին: Նրա նախիրը հասնում էր հարիւր գլուխ տաւարի: Նրա խաղողի և թթի այգիները մի-մի դրախտ էին ներկայացնում: Նրա գոյգ-գոյգ ջաղացներն իրանց անքուն չխչխկոցով այդ այգիների արթուն պահապաններն ու միշտ աւատ պահողն էին: Նա ապրում էր

իրբև գիւղի ամենաառաջին մարդը, նահապետը: Նա ամենքին ազդում էր, կենդանի օրինակ էր տալիս իր հեղինակաւոր գիրքով: Նւ այդ ամենը նա վաստակել էր շնորհիւ իր անդուլ և տոկուն աշխատասիրութեան, միշտ ներշնչուելով և ոգևորուելով այն գաղափարով թէ՛ «ծուլութիւնը և անգործութիւնը ամեն չարիքների մայրն է»:

Գիւղացիք գրեթէ բոլորը նրա խորհրդին էին դիմում և ամենքին նա իր բարի խորհուրդներով գոհացում էր տալիս: Ամեն մարդ յարգում էր նրա խօսքը և պատուում նրան, որովհետև բոլորին մի աչքով էր նայում, հաւասար սիրում, հաւասար պաշտպանում և ամենքի համար միակերպ լաւ ապրուստ ցանկանում: Նա անխնայ աչքահանիչն էր այն վաշխառուների, որոնք հինգ տասը բուբլի պարտք տալով՝ մի տարում երեք-չորս անգամ նորոգում էին իրանց պարտամուրհակները և լիսուն, հարիւր բուբլու հասցնում, աղքատ գիւղացու պրկին չօքում, դռան եզը, տան դազանը յափշտակում տանում: Նա շատ աննշան տոկոս էր առնում, այն էլ շատ անգամ

երկրային բերքով. այն է՝ նա իր տուած քսան երեսուն ըուբլու տոկոսը տարուայ վերջին, կալիուտի ժամանակ, ստանում էր կամ երկու երեք լաք ցորեն, կամ մի վեգրո քաղցու, կամ, շատ շատ, երեք չորս ըուբլի փող: Նա այդպէս էր վարւում միշտ, բայց շատերի հաւատը չէր գալիս թէ նա այդ աստիճան զիջող է: Պրա համար էր, որ զիւղի մի քանի վաշխառուներ աչքով աչք չունէին Թաթոս-ապօր երեսը տեսնելու և ականջ էին փակում նրա անունը լսելիս: Ի՞նչ կարծիք, որ այդ վաշխառուները միշտ աշխատում էին, միշտ դարաններ էին սարքում, նրան նիւթապէս և բարոյապէս խորտակելու...:

Երեկոյ էր: Հանգից վերադարձան տուն Թաթոս-ապերը և նրա միւս որդիները: Ծերուհին այդ հասակումն ևս, որ պէտք է աւելի հանգստութիւն վայելէր, չէր դադարում գործելուց: Նա սիրում էր գործել և միշտ գործել: Նրա հասակակիցները երբ հարցնում էին թէ ինչո՞ւ չի դադարում գործից, նա պատասխանում էր, թէ՛ «ծուլութիւնը և անգործութիւնը ամեն չարիքների մայրն է»:—

Մարդ պէտք է գործի մէջ մեռնի, — ասում էր նա, — և անդադար պէտք է գործէ, ինչքան ոյժերը ներեն...:

Միրաքեանը Ոսկանի հետ քահանայից էր խօսում...:

— Հը, ինչ է, էլի տէրտէրիցն էք խօսում. դեռ չէք վերջացրել. — հարցրեց ծերունին նրանց խօսակցութեանը հանդիպելով:

— Ձէ, Թաթոս-ապեր, որովհետև այսօր խօսք բացուեց քահանային կանչելու, գրա համար լանկարծ լիշեցի և մտածում եմ թէ՛ ինչ պէտք է խօսել արդեօք քահանայի հետ:

— Շատ բարի. ինչպէս կամենում ես և ինչ որ ուզում ես խօսիր: Նրան մենք ահա հացի կը կանչենք և դու կսկսես հետզհետէ բացուել նրա հետ: Յանկարծ խօսքի մէջ տեղից չը բռնես, թունդ մարդ է, ո՞վ գիտէ, կարող է մի պահաս խօսք ասել:

— Շատ է թունդ:

— Ձէ, մի երկու բաժակ որ խմեց, իսկօյն կը քաղցրանայ:

— Ուրեմն տէրտէրի գլուխը կը տաքացնենք և կակուղ դամարից կը բռնենք:

— Հենց որ գինու համը տեսաւ հերիք է.  
— մէջ մտաւ Ոսկանը:

— Գինու հետ...

— Շատ բարեկամ է:

— Ոսկան, — ասաց ծերունին թախտի վրայ նստելուց և մի քիչ հանգստանալուց յետոյ,  
— այս երեկոյ մի լաւ հացկերոյթ սարքիր, տէրտէրին էլ կանչել տուր, մի ոչխար մորթել տուր, մի կարաս գինի բաց արա, մի լաւ քէֆ անենք: Հը, քեզ կառավարիչ եմ նշանակում այս իրիկուն, տեսնեմ ինչպէս ես կարգադրում ասածներս: Տեսնում եմ որ Սեգրակի սրտովն ես, այնպէս արա, որ աւելի գրաւես սիրտը:

— Հացկերութիւն սարքելով...

— Դա էլ բան է, ինչո՞ւ ես ասում:

Ոսկանը խորին հնազանդութեամբ լսելով հօր պատուէրը՝ գնաց հարկաւոր կարգադրութիւններն անելու:

Նա բաւականին ուշ վերադարձաւ և այդ ուշանալն առանց նկատողութեան չանցաւ Սեգրակի կողմից:

— Ինչո՞ւ այդքան ուշացար, Ոսկան, — հարցրեց նա:

— Իսկի իման՞ում ես ինչ տեսի աչքովս,  
Սեղրակ:

— Ի՞նչ:

— Մեր այսօրուայ պանդուխտ-թռչնիկը,  
որին մենք զօռով հերոս էինք ուզում շինել  
— Չատուն տղան, իր մտքում գրածը տեղ  
տուաւ...:

— Ի՞նչպէս:

— Նա ուզում է տուն-տեղ ծախի, ծնողնե-  
րին վեր առնի գնայ օտարութիւն...: Ա՛խր ես  
ասում էի, որ զուր ենք գլուխ ցաւացնում  
նրան համոզելու:

— Կը փռշմանի շատ. չարաչար կը զղջայ...  
Յետո՞յ:

— Յետոյ, էլ ի՞նչ յետոյ. այդ փուչը դարդա  
Քերիմ-բէգի հետ խօսելով գնում էր գէպի  
տէրտէրի տունը: Ես հետաքրքրուեցի և հե-  
ռուից թեքաշ տալով գնացի նրանց ետեից,  
այնպէս որ իրանք ինձ չը նկատեցին: Նրանց  
խօսակցութիւնը քանի գնաց այնքան աւելի  
սուր կերպարանք ստացաւ. նրանք սկսեցին  
աւելի բարձրաձայն խօսել և երևում էր, որ  
մի բանի վրայ կապու չէին գալիս: Ես անցի

մօտիկ տան սրահի մի քունջը և ականջս լարեցի, որ աւելի պարզ լսեմ նրանց խօսակցութիւնը: Ահա ինչի վրայ էր վեճը: — Թուրքը պնդում էր, որ Սերգէյն իրան խօսքին հաստատ կանգնի և, ինչպէս խօստացել է, մուլքն իրան տայ այն գնով, ինչ գնով որ խօսել վերջացրել են. ուրիշ աւել տուող էլ եթէ լինի, չը տայ նրան: Իսկ Սերգէյը փողը նաղդ էր պահանջում, ասելով, որ եթէ չը տայ, ստիպուած պէտք է լինի նաղդ տուողին տալու: Բանը նրանում էր, որ թուրքի փողը նաղդ չէր... նա թուրքին յատուկ համոզկեր և կեղծաւոր խօսքերով խնդրում էր և երբեմն երբեմն էլ սպառնալից խօսքեր թուցնում: Բերանից, որ Սերգէյն ստիպուած լինի նրան տալու, հաւատացնելով, որ խօստացած գումարը մինչև մի երկու ամիս իրան ետեից փոշտ կը ձգէ...:

— Ուրեմն նա վերջնականապէս գնում է:

— Բա ասում եմ, չե՞ս լսում: Նա խօսքի լսող արարած է, որ մեր խօսքին լսէր: «Գայլի աւետարան է, ասում էր, որ կարգում էք գլխիս»:

— Գու առաջուց լսել էիր նրա խօսքը:

— Հնա՛, մի երկու անգամ խօսացրել էի և գիտէի միտքը:

— Յետո՞յ, ինչպէս վերջացաւ բանը:

— Յետոյ քեօխան ևս եկաւ նրանց մօտ... կարծես խօսք տուած լինէր... որովհետեւ եկաւ թէ չէ՛ նա էլ մի կողմից սկսեց համոզել Սերգէին և երեքը միասին խօսելով գնացին գէպի տէրտէրի տունը: Ես հետևեցի նրանց և տան երգիկից ականջ դրի:

«— Ինչ անենք, տէր-Բաբա, ասում էր Քերիմ-բէգը, նազդ փող չունեմ որ տամ, այս մարդն էլ ժամանակ չի տալիս: Չէս կարող իմ տեղ երաշխաւորական տալ, որ մի առ ժամանակից յետոյ փողը տամ»: Տէրտէրը մնաց կասուած և շուարած: Նա մտածում էր:

«— Շատ լաւ կը լինի, տէրտէր, — վրայ բերեց քեօխան. — մենք էլ մի կողմից կը խնդրենք Սարգսին, որ քեզ հաւատայ: — Այդպէս չէ Սարգիս:

«— Յայտնի բան է, ես տէրտէրին շատ կը հաւատամ, քան թէ ուրիշ մարդու:

«— Արա՛, տրա՛, տէրտէր, մի լաւութիւն արա՛, ինձ վրայ չի մնալ. — կրկնեց բէգը:

«—Կանէ տէրտէրը, կանէ, յոյս ունիմ որ մեր խնդիրը չը կտարէ.— աւելացրեց քեօխան: Չատուն տղան լուռ էր: Չէր խօսում և տէրտէրը, որը երկար մտածելուց չետոյ վերջապէս ասաց.

«—Իէ ինչ անեմ...

«—Յոյսս քեզ վրայ է, տէրտէր.— ասաց բէգը:

«—Ի՞նչ անեմ. քո խաթրու պիտի կատարեմ, էլի...:

«—Շատ շնորհակալ եմ, տէր-Բաբա... Գիտես, ես այդ չնչին բանի համար չէի ուզում մեր աղին գլխացաւութիւն տամ, թէ չէ գիտես, որ նա ինչ ուզի կանի: Բայց և նրան գլխացաւութիւն չը տալով, քեզ մօտ էլ երախտապարտ չեմ մնալ: Աղան որ լսի թէ՛ այս բանումը դու ինձ օգնել ես, հաւատացնում եմ որ շատ կուրախանայ և շնորհակալ կը լինի քեզանից... աչքը միշտ քաղցր կը պահէ քեզ վրայ:

«—Ի՞նչ անենք, կորած տեղ չէ. բայց այնպէս լինի, որ մեր ժողովուրդը չիմանայ թէ ես երաշխաւոր եմ: Տէս, քեօխայ, սա քեզ եմ ասում. գիտես որ դրանք նախանձոտ մարդիկ են:

«—Միամիտ մնա, տէր-տէր... սի քո տունն էլ շինուի. ինչ ես դրանց ընըխից վախում. ինչացո՞ւ են դրանք:—Միամտացրեց քեօխան: Տէրտէրը երաշխաւորականը գրեց, ստորագրեց, քեօխան էլ կնքեց, տուին Չատուն տղին և շնորհակալութիւն յայտնելով տէրտէրին դուրս գնացին: Ես իջայ ներքև, ներս մտի և, առանց ցոյց տալու, թէ բան գիտեմ, տէրտէրին հրաւիրեցի: Նա դեռ շփոթուած ու վրդովուած էր և աշխատում էր ինձանից թագցնել այդ յուզմունքը: Ես իհարկէ չը հարցրի վրդովման պատճառը, այլ ուղղակի հրաւիրեցի և նա խոստացաւ գալ...:

—Ուրեմն տէրտէրի քէֆն այս իրիկուն լաւ չի լինիլ:

—Ձէ, այդպէս բաների նայող չէ. շատ առւրդ է:

—Ձէ որ թուրքը չը տալուց, ինքը պիտի տուժէ այդ փողը:

—Գուրս կը բերի. նա թուրքից քաջ է...:

Մինչև այսպէս կը խօսէին նրանք, ոչխարն արդէն մորթուել պատրաստուել էր:

Քիչ չը քաշեց, եկաւ և տէրտէրը:

Նա իր գեցքով շատ չէր զանազանուծ մի հասարակ գիւղացուց: Եթէ Թաթոս-ապերը նրա երևալուց չը լայանէր թէ՛ տէրտէրը գտլիս է, անձանօթ մարդը չէր կարծիլ թէ նա քահանայ է: Կապալի նման մի երկարաւուն չուխտ հագին և գաւազանը ձեռքն առած, նա ո՛չ քահանայական վերարկու ունէր և ո՛չ գլխարկ, այլ կրում էր նոյն կապան և մի հասարակ մորթու փափախ, որի տեսակը երեւում էր նա և միւս գիւղացիների գլխին:

Հենց այն րոպէին, երբ տէրտէրի գաւազանի չըրխկոցը Թաթոս-ապօր տան բակի ներքին ծայրում վեր ելաւ և Թաթոս-ապերը ճրագի լուսով իմացաւ, որ եկողը տէրտէրն է, արգէն ոչխարի շախկան ծառի ճիւղից կախած էր: Տէրտէրը ոչխարի կիսանը տեսնելուց՝ ճակատը մի գազ ետ գնաց և ոտներին մի զոյգ ոտ էլ բուսաւ: Նա քայլերն արագօցրեց և ձայն տուաւ.

— Ասկան, պլոճկնին մի ձեռաց պատրաստիր... Բարի ողջոյն ձեզ... դարձաւ նա դէպի ձերունին և Սեդրակը, որոնք սրահում թախտի վրայ նստած խօսում էին:

— Հազիր է, տէր տէր, հանած է... պատասխանեց Ոսկանը:

— Օրհնեան տէր, օրհնեան տէր:

Պատասխանեցին ծերունին և ուսանողն ամեն մի տեղից և վեր կացին քահանային ընդունելու:

Տէրտէրը մօտեցաւ և բարձրանալով թախտը, նստեց վերի գլխին:

— Օրհնեալ լինիք, Աստուած օրհնէ, նստեցէք, — ասաց տէրտէրը և սկսեց գրպանը պռուտել, որ «տէրոզորմեան» հանէ:

Հաւաքուեցին ծերունու մի քանի բարեկամ հիւրեր ևս:

— Այս կողմը խնդրեմ, տէր-հայր, — առաջարկեց Սեդրակը, նստելու պատուաւոր տեղը ցոյց տալով քահանային:

— Նստիր, որդիս, նստիր, ես եօլա կը գնամ... Տէր ողորմիս եմ ման գալիս, իսկի չեմ գտնում... Դէհ, կորաւ պրծաւ էլի, անիծածը...: Զեզ պէս ազնիւ հիւրերն էլ գալուց մի մի տէրոզորմեայից, դանակից բանից չեն բերում, որ մէկը կորած տեղը, միւսը բանացնեմ... բահ, գտայ, գտայ, մեղայ Աստծու, էլի իմ ջէբս

Աստուած օրհնէ:

Ծերունին և ուսանողը, առաւելապէս վերջինս, մնացին իրար երեսի նայելիս և, տեղաւորուելով իրանց տեղերը, մի քանի ըսպէ լուռ մնացին և տէրտէրի խօսքի պատասխանը չը տուին: Լուռ թիւնն ընդհատեց Ոսկանը, որ մօտենալով հօրը՝ լուռ կերպով հարցրեց նրան թէ՛ ժամանակ չէ արազ բերելու:

— Բէ՛ր, — ասաց ծերունին:

— Ի՞նչ է ասում. — հարցրեց տէրտէրը:

— Սրազ... տէրտէր, ասում եմ բերի մի մի բաժակ խմենք մինչև հացը սլաքաստելը. լաւ չի՛ լինիլ:

— Իսկի խօսք կա՞յ դրան, շատ լաւ կը լինի, որ ձեռաց մի երկու թիքա էլ խորոված լինի մազա անենք, աւելի լաւ կը լինի:

— Առանց էն չի լինիլ:

Սրազը խմեցին, մի մի թիքա խորոված մազա արին և մի մի բաժակ էլ կրկնեցին: Երկրորդ բաժակի ժամանակ տէրտէրը խմեց «նոր հիւրի» կենացը և հարցրեց.

— Ո՞րտեղացի է այս խօզէինը, Թաթոս-ապեր:

— Ես խօզէին չեմ, տէր հալը, այլ ուսանող.

—մինչև ծերունու պտտասխանելը մէջ մտաւ Սեդրակը և յարեց. — Ինքս քաղաքացի եմ, Հայրս բուն գիւղացի, քաղաք զաղթած այն ժամանակ, երբ մի շարք հանգամանքներ գիւղացուն դէպի քաղաք էին փախցնում: Այս երկրորդ անգամն է, որ ես գիւղ եմ տեսնում: Առաջին անգամ տեսնելս մանկութեան ժամանակս էր և այդ ժամանակուայ տպաւորութիւնները մինչև այսօր էլ չեն մոռացում իմ սրտից և միշտ ստիպում են ինձ հետաքրքրուել գիւղով: Ահա այդ է պատճառը, որ այս ամառ ես գիւղն ընարեցի՝ այստեղ ապրելու և կարողացածիս չափ ուսումնասիրելու գիւղական կեանքը, հարկադրուած այն տպաւորութիւնների բուռն ազդեցութիւնից, որ ես ստացել եմ թէ՛ առաջին տեսութեանս ժամանակ և թէ՛ այնուհետեւ՝ գիւղական կեանքին վերաբերեալ գրուած քներ կարգալուց: Այժմ ես ուզում եմ տեսականապէս ծանօթանալ այդ կեանքի հետ, իմանալ, թէ՛ որքան ճիշտ են ունեցածս տպաւորութիւնները մասնաւորապէս և թէ՛ ինչ տեսակ կեանք են վարում գիւղացիք ընդհանրապէս: Եւ որքան տեսնում եմ, կամքի մեծ ոյժ է հարկաւոր վերակենդանացնել

գիւղական մեռած կեանքը: Այդ ոյժն, իհարկէ, անհատական լինել չի կարող, այլ հաւաքական, բուն ինտելիգենտ, շարժող, առաջ քաշող ոյժ, որ կարողանայ բան առաջացնել: Այդ տեսակ ոյժի պարագլուխ, իհարկէ, պէտք է լինիք դուք, տէր հայր...:

— Բ՛օ, բ՛օ, սա՛ ինչեր է խօսում,—ասաց տէրտէրը— Խնչ ֆանդ ունիս, որ ուզում ես ցոյց տաս... Խնչպէս թէ տեսնեմ ինչ տեսակ կեանք են վարում գիւղացիք:

— Տէր հայր, ես ուզում եմ իմ հայրենակիցների, ա՛խ, ներողութիւն, ուզում եմ ասել գիւղացիների վիճակն ուսումնասիրել:

— Ի՞նչպէս...

— Տեսնել թէ նրանք ի՞նչ գաղափար ունին մտաւոր և բարոյական զարգացման գործի վրայ, ի՞նչքան գոհ են իրանց նիստ ու կացից և հասարակական կենսական դրութիւնից, ի՞նչ ու ի՞նչ արդիւնաբերութիւններ կան գիւղում, նրանցից ո՞րն աւելի ծաղկած դրութեան մէջ է և ո՞րը կարօտ մշակման և արդիւնաւէտութեան: Այլ և... ո՛չ, ո՛չ, ներողութիւն:

— Հ՛ր, էլ ի՞նչ, ասա՛:

Երեմ Ե Ե Ե

— Կարելի՞ է, ձեր շահերին դիպչած չլինել Հօ:

— Ի՞նչ կայ, ասն:

— Այն, որ ձեզանից կախում ունի:

— Ի՞նչ:

— Կրթութեան գործի գրութիւնը...:

Տէրտէրը ապուշ կտրած մնաց ուսանողի երեսին նայելիս: Կարծես նա իր մտքում ասում էր՝ «ո՞րտեղից ընկայ ես այս շատախօսի ձեռքը»: Նա, իհարկէ, ոչինչ չը հասկացաւ, նրա խօսքերից, չիմացաւ թէ՛ ինչ ասել է «ուսումնասիրել, մտաւոր, գաղափար, բարոյական, կրթութիւն, հաւաքական, անհատական, զարգացում...» և ամենախրթին գրաբանը նդունելով իրան համար նրա խօսքերը, իրան արտաքուստ այնպէս ձևացրեց թէ իբր շատ լաւ հասկացել է և գլխով մեքենայաբար գրական պատասխանի մի շարժում գործեց, որին և լետոյ այս խօսքերն աւելացրեց՝ «շատ լաւ կը լինի, որդի, Աստուած սրտիդ խորհուրդն ի բարին կատարէ»:

Սեգրակը հասկացաւ, որ տէրտէրը շատ քիչ բան բան է գլխի ընկել իր ասածից, կամ

Թէ իսկի ոչինչ էլ չի հասկացել, և խօսքին աւելի գիւրբմբռնելի և սարդ սճ տալու համար հարցրեց.

—Տէր հայր, ժողովուրդդ շնորհակալ է իր կառավարութիւնից, ապրուստից, նիստ աւկացից:

—Ինչո՞ւ չէ, շնորհակալ չեղած ի՞նչ պիտի անէ որ:

—Ի՞նչ իմանամ...:

—Շատ լաւ են, փառք Աստուծոյ:

—Լաւ... ի՞նչպէս էք կառավարում գուք ժողովուրդի հետ:

—Ի՞նչ կողմից ես ասում:

—Առհասարակ:

—Շատ լաւ, շատ գոհ եմ, փառք Աստուծոյ:

—Լաւ վարձատրո՞ւմ են ձեզ. ձեր վարձը տալի՞ս են:

—Կարո՞ղ են որ չը տան. մի երկուսը փորձեցին ընդդիմութիւն ցոյց տալ, բայց չը կարողացան: Ախր իսկի կարո՞ղ են, հողիները կը հանեմ...:

—Բայց ինչո՞վ էք փոխարինում գուք առհասարակ այդ ամենին:

— Ի՞նչ պէս... — Հարցրեց տէրտէրը դարձեալ չըհասկացածի նման:

— Ի՞նչ բարոյական վարձատրութիւն էք տալիս ժողովուրդին ձեր ստացած նիւթական վարձատրութեան փոխարէն:

— Օրէնք եմ կատարում, վարձս ստանում. էլ ի՞նչ ունեմ, որ ինչ տամ:

— Ա՛յ, այդ քիչ է: Օրէնքը կատարելով ժողովուրդը բարոյականապէս վարձատրուած չի համարւում. պէտք է խրատէք, քարոզէք, յորդորէք, որ հեռու կենայ նա անբարոյական, վնասակար միջոցներից, հետևի բրիստոնէութեան վայել ընթացքին և մարդկութեան ուղիղ ճանապարհին. չը ստէ, չը հայհոյէ, չը գողանայ, չը գրկէ, ուրիշի ունեցածին վրայ չը նախանձէ, չը ծուլանայ, չը թմրի, գործից չը փախչէ, թեթևակի հարուածներից և ճնշող միջոցներից յուսահատուելով օտարութիւն չը գնայ, իր հողը, իր տունը, իր տեղը անտես չառնէ, այլ ընդհակառակը գործէ անդադար, աշխատասիրութեամբ իրան բարի մարդ և բարի բրիստոնէայ դարձնէ և հեռու փախչէ սուտ, վնասակար և կեղծ ու պատիր

գործքերից: Ահա ինչ է նշանակում բարոյա-  
կրթել ժողովրդին: Պէտքէ հասկանաք թէ  
որչափ աւելի հոգեկան մխիթարութիւն կը  
վայելէք բարոյապէս կրթուած ժողովրդի մէջ.  
դեռ չեմ ասում, որ նիւթապէս ասպհովուած  
ժողովրդից առաւել ևս նիւթական վար-  
ձատրութիւն կը ստանաք, քան հիմա ստա-  
նում էք, այն էլ, ինչպէս դուք էք ասում,  
թ ա կ ո վ մ ա հ ա կ ո վ:

— Աղբաթխէր, ո՞վ է խօսքիդ նայողը:

— Խօսում էք որ, կամ... ներողութիւն, կա-  
րո՞ղ էք այնպէս խօսել, ինչպէս վայել է:

— Ե՛հ, բան չունէք:

— Լա՛ւ... այդ այդպէս... ուսումնարան պա-  
հում էք, թէ՛ դրա վրայ էլ նայում էք այն-  
պէս, ինչպէս ժողովրդի բարոյակրթութեան  
գործի վրայ:

— Ե՛հ մի երկու աշակերտ ունիմ, ինձ հետ  
ժամ են գնում, փոխ են ասում, ինձ օգ-  
նում են:

— Ո՞րտեղ էք դաս տալիս:

— Տանը:

— Ի՞նչ էք դաս տալիս:

— Սաղմոս, Ժամագիրք, Աւետարան, երբեմն  
և Նարեկ:

— Ինչո՞ւ ուսումնարան չէք պահում, շատ  
երեսաներ չէք հաւաքում և նոր մեթոդով  
չէք դաս տալիս:

— Ինչո՞վ:

— Նոր մեթոդով. այսինքն մանկավարժա...  
անի, ինչպէս հասկացնեմ ես... դուք Աղայեանցի  
կամ Տէր-Ղևոնդեանցի «Մայրենի լեզուն» չէք  
տեսել. նրա վրայ չէք կարող դաս տալ:

— Եանի նա շատ խրթին է:

— Անդհալուար, շատ պարզ է և շատ  
հեշտ. ձեր դաս տալիս գրքերից նա շատ պարզ  
է, աշխարհաբար, հասկանալի լեզուով, ինչ-  
պէս մենք խօսում ենք. աշակերտներն աւելի  
հեշտ կարող են ըմբռնել: Նրա մէջ խօսւում  
է շների, գալլերի, կատունների վրայ: Մար-  
դիկ նրա մէջ համարեա բոլորը գործում  
են, իրար հետ խօսում են: Բոլորը երեսանե-  
րին ծանօթ առարկաներ են. այնպէս որ երե-  
խայի ուշ ու միտքը այդ ծանօթ առարկաների  
և կենդանիների վրայ լինելով՝ շուտ կըսովորի  
կարգալը և շուտ կըմբռնէ կարգացածը:

Տէրտէրը մնաց ապշած: Նա մեկ կարծեց, թէ Սեդրակն իրանով ծաղր է անում, մէկ է-կարծեց թէ՛ նա գիտ է, որ կարգալուց խօսել լին շների, գալլերի, կատուների անուն է մէջ բերում: Ուստի մի քիչ իրան զսպելուց և մի քիչ լուելուց յետոյ հարցրեց.

— Պարոն Սեդրակ, դու ինչք՞ համար ես եկել այս գիւղը:

— Ս.մառս կենալու և գիւղական կեանքին...:

— Դէ էլ մի երկարացնիլ. հենց այդ է, որ ամառը կենալու ես եկել, ուրիշ ոչինչ: Հո, պրծաւ գնաց. ողորմի քո ազիզ մեռելի հոգուն: Եկել ես, գլխներիս վրայ տեղ ունիս, կեր, խմի, քէֆ արա, ուզում ես ամեն օր արի ինձ մօտ թթի տակին շուաքումը նստենք, այն ջրի պէս շոռացող արաղից խմենք, քէֆներս քօք անենք...: Ինչ գործ ունիս ուսումնարանի բանի հետ. քո ինչ պարտքն է որ իմանաս, թէ գիւղացին ինչ գործ է կատարում, որքան է աշխատում, հողը ինչ հող է, ջուրը ինչ ջուր է, գիւղացին ինչո՞ւ է հայհոյում, ինչո՞ւ է օտարութիւն գնում, ինչո՞ւ եմ ես աշակերտ պահում, գիւղացին ինչանից ինչ

օգուտ է ստանում, և, չք գիտեմ, Հազար ու մի այդ տեսակ տուտուց մուտուց բաներ... : Սղբաթխէր, եկել ես ինձ լաւամարդի՞ դառնալու, թէ՛ վատամարդի :

— Տէր Հայր, ինչէ՞ր էք խօսում. մի՞թէ մարդ միայն իրան Համար պիտի մտածէ. չէ որ մեր կոչումն ու սլարտականութիւնն է, իբրև դատող, քննող, սովորեցնող, Հասկացնող մարդու, գործել ժողովրդի մեջ, ծանօթացնել նրան ասլրելու, աշխատելու Հեշտ ճանասլարհի Հետ, նրան ծառայութիւն մատուցանել կըրթութեան և զարգացման գործի մէջ, վերածել նրան իսկական, սլարտաճանաչ գիւղացու անուանը և կոչմանը, ցոյց տալ նրան իրան բարոյապէս և նիթապէս ասլահովող միջոցները... թէ չէ միայն նստենք, ուտենք, խմենք, վալրենաբար մեծանանք և այնպէս մեռնենք, չէ որ դաւաճանած կը լինենք սլն ձիրքին ու շնորհքին, որ տուել է մեզ բնութիւնը, և շնորհքի կատարելագործութեան աստիճանին, որ տուել է մեզ ուսումը—յառաջադիմութեան, զարգացման գաղափարին, մեր կոչմանը : Մեր ասելով, խօսքս աւելի ձեզ

է վերաբերում, որովհետեւ ժողովրդի հովիւ էք: Նեղանալու տեղիք չը պիտի ունենաք, տէր հայր: Հասարակական գործիչը անձնական շահի համար, մի քանի սեւ կոսպէկների խաթրու չը պէտքէ զոհէ ընդհանուրի շահը: Ամօթ ու նախատինք կը զառնանք մեր ապագայ սերունդի առաջ, անաչառ քննադատութիւնը պատմութեան սեւ էջերը կը տայ մեզ և հոյի հետ կը հաւասարացնէ, եթէ մենք մեզանից կախուածը չը կատարենք, եթէ ժամանակի պահանջներին համապատասխան կրթութիւն չը տանք մեր զաւակներին, եթէ նրանց չը դաստիարակենք ուսման և բարոյակրթութեան գէթ ամենատարրական գիտութիւններով...:

— Ա՛յ Թաթոս-ապեր, քո այս հիւրը մեր գլխին քննիչ է եկել, թնչ է: Որտեղից ես ճարեմ սրան: Ախր քո ոսկորդ էլ է սիրում այս տեսակ զրոյցներն է, ես գիտեմ:

— Սո՛ւտ է խօսում, տէրտէր. դու չե՞ս հաւատում դրա խօսքերին:

— Դու շատ ես հաւատում, հա՛:

— Իրուստ խօսքին ո՞վ չի հաւատալ:

— Իրուստ է...:

— Գրուստ է...:

— Գրուստ է... եղբայր, մենք խաւար ենք.

— գոչեցին ամեն մի կողմից ներկայ գտնւող հիւրերը:

— Եանի մեզ բերել ես այստեղ մի թիքա հոց տաս, թէ նստենք կռիւ անենք:

— Ինչո՞ւ էք կռիւ անում:

— Ձե՞ս տեսնում որ սրա ամեն մի խօսքից արեան հոտ է փչում:

— Ընդհակառակն ամեն մի խօսքը խունկ ու ձէթի նման մեր հոգու մէջն է ներշնչում:

— Ձէ, եթէ հետը դլուխ գնենք, պէտք է դաւի դարաբա սարքենք:

— Սխալ էք...:

— Սխալ էք...:

— Սխալ էք... տէր հայր, մարդը շատ դրուստ բան է խօսում, մենք խաւար ենք, մենք մարդ չենք, մենք իրար ոտի տակ քանդող ենք, մենք իրար ձեռքի սլատառ խլող ենք. մեր ծուլութիւնը, մեր անգործութիւնը, մեր չկամութիւնը մեր տունը քանդել է... կրկնեցին միաբերան ներկայ գտնւողները:

— Ի՞նչ էք ասում, մի պարզ ասացէք տեսնեմ.

չը լինի խօսք մին էք արել, երկու մօնթ  
ուենիմ ձեռքիցս խլէք:

—Սխր ինչո՞ւ միայն երկու մօնթ պահէս.  
մեր գիւղում մի լիսուն վաթսուն երեխայ չը-  
կան, որ հաւաքես մի տան մէջ նրանց բոլորին  
էլ դաս տաս: Ինչո՞վ է մեղաւոր գիւղի աղքատի,  
չքաւորի, որբ և այրու որդին, կարելի է նա  
կարգալով այն միւսներից աւելի լաւ մարդ է  
գուրս գալու. ինչո՞ւ հարուստի տղին դաս  
տաս, աղքատին չէ: Ար նա փող չի տալիս: —  
Ինչո՞ւ չպիտի այնպիսի լեզու գուրս բերես, այն-  
պէս քարոզներ տաս, սիրտը դու՛ժ շարժես  
ինձ նման, այն միւսի, մէկէլի նման ունեւոր-  
ներին, որ նրանք օգնեն անձարին, հոգան  
իրանց միջոցներից չունեւորի կարիքը...:

—Սխալ ես խօսում, երեսպաշտութիւն  
ես անում, այն մարդու ասածն ես ուղղում  
հաստատել, թէ չէ իսկապէս դու էլ գիտես  
որ այդպէս բան չի կարող լինել: Ա՛յլ է ուս-  
ման վրայ մտածողը, աղքատն ի՞նչ է հասկա-  
նում թէ ի՞նչ է ուսումը...:

—Օ՛հ, տէր հայր, աւելի վատ... ուրեմն  
որ նա չի հասկանում, հարկաւոր էլ չէ

Հասկացնելը. — Հարցրեց ուսանողը:

— Ո՞ւմ ինչ դարգն է կտրուել:

— Դարգը հենց ձերն է, ձերը. դուք նրա հոգևոր հայրն էք համարուում: Ձը գիտէք ինչ ասել է հոգևոր հայր: — Հոգևոր հայր նշանակում է իր հօտի հոգևոր տեսուչ, նրա հոգևոր գործերի վրայ դարման տանող: Դա գիցուք աւելի լայն միտք ունի... Բայց դուք, որ այս ժողովրդի հոգևոր հայրն էք, հովիւն էք՝ պատասխանատու էք, եթէ չասեմ ձեր իշխանութեան առաջ, գոնէ ձեր խղճի, ձեր կոչման առաջ նրա հոգևորի, բարոյականի մասին. դուք այն հզօր գործօնն էք, այն ֆակտօրն էք, որ պիտի ուսուցանէք ժողովրդին հեռու մնալ ամենավնասակար միջոցներէց, ճանաչել իր պարտքը դէպի իր եկեղեցին, ընկերը: Իսկ այդ ամենից լետու, ձեր պարտքն է մտնել, ասել, համոզել, մինչև անգամ երեսայի թեից բռնել, գիրքը կանառակը տալ և ուսումնարան տանել:

— Սուտ է, սուտ է. գլուխս չի մտնիլ այդպիսի բաները: — Թաթոս-ապեր, եթէ կանչել էք մի թիքա հաց տաք, բերէք, թէ չէ՝

վեր կենամ զնամ քնեմ:

Այդ միջոցին տէրտէրին համարեա այդ նեղ տեղից ազատեց Թիւնին, Թաթոս-ապօրենց տան ծառան, որ մօտենալով նրանց, ընդհատեց բորբոքուած խօսակցութիւնը և բարձրաձայն կանչեց:

— Տէր տէր, պլոճկնին խրոված է:

— Ա՛յ օրհնեալ լինի իմ Թիւնին, հա՛, բարով քեզ պսակեմ, որդի. բէր, իմը դա է, ինչ գործ ունիմ խոր խոր տեղերը:

Ուսանողի դէմքի վրայ մի դառն ժպիտ անցաւ և նա մնաց լուռ:

## Գ.

Ընթրիքը վերջացաւ: Մութը կոխեց: Գիւղացու քնելու ժամանակն էր: Տէր-Բազա-սարը սեղանն օրհնեց, տեղից վեր կացաւ, գաւազանը ձեռքն առաւ, չանի տակը դէմ տուեց և շնորհակալութիւն յայտնելով ձերուհուն, նրա արած հիւրասիրութեան համար, գարձաւ դէպի Միրաքեանը:

— Ո՛րդի, եկել ես, կէր, խմիր, քէֆ արա,

ինչ գործ ունիս ուսումնարանի բանի հետ.  
ինչի՞դ է պէտք թէ՛ ժողովուրդը գոհ է իր  
վիճակից, թէ՛ դժգոհ, լաւ է կառավարում,  
թէ՛ վատ:

— Ա՛յ, տէր տէր. ես պնդում եմ իմ ասածի  
վրայ, որ մենք պարտական ենք մտածելու  
մեզանից թշուառի վիճակին վրայ: Եթէ ըն-  
կերդ, հարևանդ քեզանից վատ է ասլում,  
բարոյապէս և նիւթապէս տանջում է, այդ-  
պիսի դէպքում քո հացդ էլ հարամ է լինում...:  
Վերջապէս դուք ժողովրդի հայր էք, դուք  
հօտի հովիւ էք, պէտք է կատարէք ձեր պարտ-  
քը, չը պիտի բաւականանաք միայն մեռել  
թաղելով, պէտք է իմանաք նաև մեռելատի-  
րոջ միտիթարել և եթէ նա մեռնողից զըր-  
կուելով, զրկում է և տան աշխատող ձեռքից,  
պէտք է մտածէք օգնութիւն հասցնել նրան...:

— Է՛հ... այսօր ի գահս, վաղն ի գագաղս...  
տասց տէրտէրը, բարի գիշեր մաղթեց և հա-  
մարեա փախաւ, ազատուեց ուսանողի ձեռքից:

Տանեցիք քնեցին:

Քնեց և գիւղը:

Սեդրակի համար գեռ վաղ էր քնելը.

մանաւանդ նա իր շօշափած հարցերին բաւարար սլատասխան չստանալով գիւղի, այդպէս ասած, ինտելիգենտ— հօր, ժողովրդի ֆակտօրի կողմից, նրա սիրտը տակնուվրայ էր եղել: Նա դուրս եկաւ տանից և Ոսկանի հետ միասին սկսեցին քայլել դէպի գիւղի դուրսը, կանաչկոտ և հովասուն վայրերի ամենամաքուր օդը շնչելու և գիշերալին խաղաղութեան մէջ թռչունների երգը լսելու:

Սմպերի միջից դուրս եկաւ լուսինը:

— Ի՞նչ տուն է այս, Ոսկան, — հարցրեց Սեգրակը, — որ գիւղից անջատուած է և շինուած է քաղաքի լաւ տների ձևով: Ո՞ւմն է այս: Ես այսօր առաջին անգամ տեսի, բայց մոռացայ հարցնել:

— Գիւղի գոռնովն առաջին անգամ մտնողը կը կարծէ թէ՛ դա գիւղի կալուածատէր աղալի տունն է. որովհետեւ Ղարաբաղի գիւղերից շատերը, որոնք կալուածատիրական սեպհականութիւն են և գտնուում են նրանց անմիջական տիրապետութեան տակ, նոյն իսկ իրանց մէջ տներ ունին այդ կալուածատէր բէգերի կամ աղանների բնակութեան համար:

Բարեբաղդաբար մեր թուրք կալուածատէրը մեր մէջ չէ բնակուում: Իսկ այդ տունը մի հարուստ քաղաքացու տուն է, որ սովորութիւն ունի ամեն ամառ այստեղ գալ, իբրև ամառանոց: Թուրք բէգերի տներն առհասարակ սրոշում են իրանց կեխտոտութեամբ և անմաքրութեամբ նոյն իսկ զբսից: Իսկ ներսն Սստուած հեռու տանէ—ասլականուած, նեխուած և խեղդող օդ, անհոգութեան և կարծես անտարբերութեան մատնուած և միանգամայն կեխտոտ նիստ ու կաց: Նրանք ունենում են մանաւանդ հին, պարսկական—խանական ճաշակի լուսամուտներ, մանր և գոյնզգոյն ապակիներ հազցրած: Իսկ այդ տունը, տեսնում ես, բոլորովին տարբեր ձև ունի: Նա շինուած է նոր ճաշակով և աւելի շքեղ փալ ու տեսք ունի իր արտաքին նշքութեամբ և ներքին բաժանմունքներով ու արդուզարգով. լուսամուտները բարձր և մեծ մեծ, պատշգամբը վայելուչ և ուշագրաւ: Այդտեղ ձմեռը մարդ չէ բնակուում, տուն ու դուռը փակ և խափան է լինում. իսկ ամառը, Մաչխսից սկսած մինչև Օգոստոսի վերջը,

կենդանութիւն է ստանում իր տիրոջ ճոխ ու փարթամ բնակութեամբ: Այդ ընտանիքն ամեն տարի գալիս է Բագուից: Տունը հենց այդ ընտանիքի սեպհականութիւնն է, նա է շինել տուել: Նրա տէրը վաճառական դասի տուղերիցն է, ինքը մի ժամանակ այս դիւղացի եղած, այսինքն այստեղ ծնուած, սնուած, այստեղ մեծացած, և քաղաքում իր փառքն ու պատիւը և կարողութիւնը վաստակած: Ով որ այս դիւղացի է, կամ ծանօթ է այստեղին, ով վերջին տասը տարուայ ընթացքում մի քանի անգամ լսել է Բագուի մի հարուստ նաւթահանքատիրոջ անուն, նա իսկոյն կիմանայ որ այս տունը նրանն է — Պողոս Երանեանինը, որ ամեն տարի Բագուից գաղթում է այստեղ ամառն անցկացնելու: Բագուի հրատապ արեգակը և խեղդող օդն ու փոշին փախցնում են հարուստին դէպի հովասուն վայրերը: Նրանք խուճապած այդ քաղաքի ամառուայ ծանր և անտանելի կեանքից, վազում են դէպի մեզ և թողնում այնտեղ միայն նրանց, որոնք անկարող են լինում յարմարացնել իրանց միջոցներն ամարանոցի կեանքին... Ամեն տարի

Նրանեանի ընտանիքը աղախիններ, ծառաներ  
և գաստիարակչուհիներ առած մեր գիւղն է  
գալիս...:

— Իսկ ի՞նչ տեսակ կեանք է վարում նա  
այստեղ:

— Ի՞նչ կողմից:

— Հա՛, ուզում եմ ասել ի՞նչ զաղափարի  
տէր մարդ է. ինտելիգենտ է, արխատուկրատ է,  
դեմոկրատ է, ի՞նչ է:

— Աչինչ, միայն իր կաշուի վրայ մտածող,  
ուտող, խմող, քէֆ անող մարդ է: Իսկի մի  
գոյն չունի...:

— Ա՛յ մի օգնութիւն չի հասցնում գիւղացոց:

— Օրինակ, որ նա գալիս է, մեր գիւղի  
կաթն ու մածունն է թանգացնում միայն.  
սլանիր, իւղ, հաւ, ջուտ, ձու, լաւ գնով  
ծախսում են նրա վրայ:

— Ուրիշ, բարեգործական նպատակների  
նուիրաբերութիւններ չի՞ անում արդեօք:

— Քաղաքի համար՝ չեմ լսել. իսկ այստեղ  
էլ՝ չեմ տեսել:

— Եւ ահագի՞ն կարողութիւն ունի, ասում էք:

— Ահագին, միլիօնի հասնող:

— Հետաքրքիր է մի տեսնել այդ մարդուն  
և նայել դրա պատկերին:

— Հիմա՞, անժամանակ մտնենք անքաղաքա-  
վարութիւն չե՞լինիլ:

— Նո՛ւ, չըմտնենք, դրսից նայենք, ականջ  
դնենք. տունը սովորականից դուրս կենդանու-  
թիւն ստացած է. ձայներ են լսոււմ. կարելի  
է դարձեալ քէֆ լինի...:

Նրանք այգայէս խօսելով մօտեցան Նրա-  
նեանի տանը: Արդարև այդտեղ կենդանութեան  
մեծ շարժում կար: Կարծես ամեն օրուայ սո-  
վորական նիստ ու կայր չը լինէր: Բոլոր լուսա-  
մուտներից փայլում էր սենեակների լոյսը.  
խօսակցութեան բարձր ձայներ էին լսոււմ.  
նուագում էին թառ ու քամանչա, երգում  
էին սլարսկական երգեր և երբեմն հատ ու  
կտոր հայերէն աղաւաղուած երգեր: Այդ երե-  
կոյ Նրանեանն, ինչպէս երևում էր, հիւրեր  
ունէր և հիւրերը պէտք է քաղաքից եկած  
լինէին. աւելի ճիշտ ասած քաղաքից ինքն ի-  
րան հետ պիտի բերած լինէր, որովհետև նա  
այդ օրը քաղաքից էր վերադարձել:

— Այս թառ ու քամանչան կա՞յ ձեր

զիւղում, Ոսկան:

—Քամանչա կալ իսկ թառ չէ: Այդ քամանչա ածողն էլ մեր զիւղի ածողի պէս չի երևում: Ինչպէս երևում է թառ ու քամանչան էլ, ածողն էլ, երգողն էլ, հիւրերն էլ քաղաքից են եկել:

—Միշտ այդպէս քէֆ է անում այդ մարդը:

—Միշտ, ամեն տարի, և եթէ զլուխը տաքանում է, էլ մի ամիս—զիշեր ցերեկ, խեղճերին բաց չի թողնում:

—Ինչքան փող կը ծախսէ այդ մարդն այստեղ մի ամառ:

—Ինչ իմանամ, շատ:

—Ե՛լի, շատ ի՞նչքան:

—Մի երկու հազար մանէթ:

—Ինչի՞ վրայ:

—Կեր ու խումի, փեշքեաշների, սազանդարների, ծառաների, ձիերի, հաւերի, շան գէլի, սատանի բաժին, ս՛ր մինն ասեմ:

—Իսկ մարդու բաժին, բարի գործի համար, ոչինչ չի՞ տալիս:

—Ոչի՛նչ:

—Գիւղում ուսումնարան բաց անելու

Համար խօսել, զիւղական կեանքով Հետաքրքր-  
քրուել...:

— Է՛, ասածներիդ Հետքն անգամ չը կայ...  
Խնչ իմանամ. կարելի է տարին, կամ երկու  
տարին, մի անգամ այստեղ սլատահած ժամա-  
նակ իր Հօր ու մօր գերեզմանն օրհնել տայ,  
կէս մանէթ կամ մի մանէթ խաչահամբոյր  
տայ տէրտէրին:

— Այդ է դրա բոլոր բարեգործութիւնը:

— Այդ է, որքան ես գիտեմ:

— Նշմարիտ, ես Հետաքրքրուում եմ այդ  
մարդով: Ի՞նչ կը լինի որ մտնենք. մեզ Հօ  
չե՛ն թակիլ դուրս անիլ: Ինչ կը լինի կը լի-  
նի, արի՛ մի ճակատներս պնդացնենք, մանենք,  
տեսնենք ի՞նչ արարած է դա: Ես անքաղա-  
քավարութիւն չեմ համարիլ այդ տեսակ մար-  
դու տանը անկոչ հիւր լինել:

— Տնաշէն զիւղ տեղն ո՞վ է այդ կարգ ու  
կանոնը հարցնում: Նա էլ քո ասած շատ բա-  
րակ հասկացողն երից չէ: Մտի՛ր ար-  
խալին:

Այսպէս խօսելով նրանք ներս մտին:

Արզարե Երանեանի հիւրերը քաղաքիցն

էին: Նուագախումբը ևս քաղաքիցն էր եկել: Այդտեղ բոլորը վաճառականներ էին: Թիւը հինգ էր: Քէֆ անող խմբի մնացորդը լրացնում էին Երանեանի տան երկու սեռի անդամներն անխտիր, իրանց ռուս դաստիարակչուհու հետ, որոնք խառն նստած էին սեղանի շուրջը: Երևում էր, որ առանց սեռի խրտուրութեան և խառն ի խուռն նիստ ու կացի լառաջադիմութիւնը վաղուց ընդունուած էր Երանեանի տանը...: Մարդը կատարեալ ամերիկացու կեանք էր վարում սեղանի վրայ, թէև շուրջը պարսկական նուագածուներ էին բազմել, թէև ինքը Ղարաբաղի մի՛ իրան ծննդավայր գիւղումն էր գտնւում, թէև մի րոպէ անգամ չէր մտածում իր հայրենակիցների դրութեան մասին, չէր հարցնում և բնաւ չէր հետաքրքրւում նրանցով և վերջապէս թէև մարդը լուսաւորութեան և լառաջադիմութեան համ ու հոտը չառած և կողքովն անգամ չանցած մի կոպիտ արարած, մի հրէշ էր ներկայացնում:

Երանց ընդունեցին և նստելու տեղ տուին: Նրանք նստեցին սեղանից հեռու:

Նորեկների համար նոր խօսք չը բացուեց, այլ շարունակուեց հինը՝ քէֆը քէֆ, երգը երգ:

— Սրանց դաստիարակչուհին ունւ է թէ գերմանացի, Ոսկան. — հարցրեց Սեգրակը թեքուելով Ոսկանի ուսի վրայ այնպէս, որ ոչ ոք չընկատեց քէֆի ազմկալի դրուժեան մէջ:

— Ռուսերէն է խօսում, չը գիտեմ: Մենք սկզբում կարծում էինք թէ նա իրան սիրուհին է, որովհետև կինը մի բանի պէտք չէ... բայց լետոյ հաւատացրին մեզ, որ մօզան այդպէս է:

— Ի՞նչպէս:

— Որ հարուստներն իրանց տներում դաստիարակչուհիներ պահեն?!!

— Հա՛, այդ ճիշտ է... դաստիարակչուհիներ պահում են երեխաներին կրթելու, քաղաքակրթելու և բարոյակրթելու համար: Բայց մեր մէջ, մանաւանդ այդ փոզով հարբած, չըտես, պտկից ծաղկած հարուստների մէջ, չը գիտեմ որքան առաջ է գնում բարոյակրթութեան ճիւղը: Նրանք դաստիարակում են...: Իսկ կարգալ անշուշտ սկսած կը լինին երեխաները, չէ:

— Կարգալ՝ չը գիտեմ, միայն ռուսերէն խօսում են...:

Այդ միջոցին տանտէրը, պ. Երանեանը, հազիւ սթափուած թունդ քէֆի ազդեցութիւնից և թառ ու քամանչայի գրաւող ձայնից, ուշքը նոր նոր դարձրեց դէպի նորեկները, շաղուած աչքերի տակով դիտեց նրանց և միայն Ոսկանին ճանաչելով, հրաւիրեց մօտենալ սեղանին և ընկերին էլ համեցէք անել:

— Խնդրեմ, պրաշու վաս. — կրկնեց նա, դառնալով մերթ դէպի Ոսկանը և մերթ դէպի Միրաքեանը: Նա կարծես նոր նկատելով ուսանողի անձանօթ պատկերն ու անսովոր տարազը, կրկին դարձաւ դէպի Ոսկանը և հարցրեց. — ո՞վ է ընկերդ, Թաթոս-ասլօր տղայ:

— Շուշեցի է:

— Անունը:

— Սեդրակ Միրաքեան:

— Ի՞նչ գործի տէր է:

— Համալսարանի ուսանող է:

— Այսինքն Լազարեան ձեմարանի. — շտապեց ուղղել Միրաքեանը:

— Հաց անուշ արէք: — Ասաց Երանեանը և

առանց խօսք աւելացնելու երեսը դարձրեց  
գէսի նուագածուները և սկսեց մատներով  
գլխի կոշտ ու ցրուած մազերը անդագար վեր  
ու վայր սանրել:

Սեգրակը պատասխանի տեղ գլխով նշան  
արաւ. իբրև շնորհակալութիւն վաճառականի  
հիւրասիրութեան համար և սկսեց տնողել  
երեխային, երբ հիւրերից մէկը դառնալով  
գէսի փոքրիկ ժորժը՝ ձեռքով արաւ նրան  
մօտ գալու:

—Ե՛, նի խօջ.—ասաց ժորժը ուտերը վեր  
ի վայր անելով և երեսը դարձնելով նրանից,  
դաստիարակչուհու մօտ վազեց ու նրա փե-  
շին կպաւ:

—Արի, ժորժ, արի ինձ մօտ քեզ կամփետ  
տամ:

—Նի խօջ... կրկին պատասխանեց երեխան  
և երեսն աւելի խոր թաղեց դաստիարակչու-  
հու փեշերում:

—Դէ ինձ մօտ արի, ժորժ, պազի կա մնէ,  
—դարձաւ Նրանեանը գէսի փոքրիկ տղան:

—Ժորժ, ժորժ, զաւեօտ պապա, ժորժ.—  
բռնեց նրա գլխից դաստիարակչուհին և զօռով

երեսը դարձրեց դէպի հայրը:

Թորժն ընկաւ հօր գիրկը, որը խտտելով նրան, նստեցրեց ուղիղ սեղանի մէջ տեղը, փսփփեցրի կողքին:

— Նու շտօ խօջեշ, Թորժ, շտօ եա դամ տէրէ.

— Հարցրեց հայրը:

— Եաբլու, գլուս. — ասելով երեխան, ձեռքը մեկնեց դէպի տանձ ու խնձորի փսփփեցրը:

— Շտօ:

— Գլնու... բարկացած պատասխանեց երեխան:

— Հն, հն, նիգօդեայ. չը կարողացանք պարզ խօսել տալ էլի. ուզում է եաբլօկ ասել, գրուշ ասել, լեզուն պատ չի գալիս:

— Ինչ է, պարոն Երանեան, շտօ էք սիրում խօսել ուսերէն և ուզում էք որ երեխան անպատճառ այդ լեզունով սկսի խօսել. — վերջապէս համբերութիւնը հատած, երկար լընութիւնից յետոյ, հարցրեց ուսանողը:

— Շտօժ, պարոն, այամը էնպէս է. մինչդեռ ժամանակս ձեռս է...:

— Ժամանակը խօ՞ ձեռից չի՞ փախչում:

— Կարող է պատահել, շտօժ, բայց քանի

որ ձեռքներովս գալիս է, սրտներս էլ ուզում է, ինչո՞ւ ձեռից տանք... ինչո՞ւ մի վարժուհի չը բռնենք, որ երեխաներին աբրազաւատց անի:

— Շատ լաւ միտք է աբրազաւատ անելը. բայց ինչո՞ւ գոնէ մի երկու տարի մայրենի լեզուով չը թոթովէ: Ինչո՞ւ չը հասկանալ այս ամենատարրական մանկավարժութիւնը, որ ամենից առաջ մայրենի լեզուն պէտք է սովորել, իսկ յետոյ, աստիճանաբար, ուրիշ լեզուները:

— Ե՛հ, աղբաթխէր, մարիենի լեզուն մենք խօսում ենք, էլի, չեփոր ինի մեզանից կը սովորեն:

— Բայց հիմա իսկի գիտե՞ն խօսել:

— Ի՞նչ:

— Հայերէն:

— Քիչ ու միչ:

— Իսկ քանի՞ տարեկան են երեխաները... այժ օրինակ, քանի՞ տարեկան է այդ փոքրիկ ծորժը և խօսում է հայերէն, թէ՛ նա էլ ուուսերէնի պէս...:

— Իե՞ռ փոքր է, երեք տարեկան չը կայ, երեխայ է, լեզուն նոր է բացւում, հայերէնն

էլ ռուսերէնի պէս լրմլրմցնում է: Շատ վախտ  
այնպէս պարզ խօսում է որ, բայց երբեմն  
թարսւում է, կարծես նարօչնօ թըլպատցնում  
է լեզուն:

— Ախր ինչպէս խօսի. սա ինչ ոյժ ունի,  
որ երկու լեզուները միասին սովորէ: Գիտէք,  
պ. Երանեան, որքան հակառակ է մանկավար-  
ժական կանոններին մի որոշ հասակից, առա-  
ջին տարում, երկու լեզու սկսել:

— Բաս ինչպէս:

— Սովորեցրէք նախ մայրենի լեզուն:

— Է՛հ, հէր օրհնած մարիենի լեզուն չեփոր  
լինի կը սովորի:

— Յեփ որ լինելը դժուար է, պ. Երան-  
եան, երեխայի լեզուն որ բացւում է, նրան  
նախ և առաջ խօսել սովորեցնում են մայրենի  
լեզուով: Այդպէս և կարգալը: Գա բնական է,  
մինչև անգամ չը պէտք է դրա գէմ խօսք  
լինի: Բնականի վրայ, իհարկէ, հիմնել է իր  
օրէնքը նա և մանկավարժութիւնը, որը մեզ  
միշտ նույնն է թելագրում...:

— Է՛հ, հէր օրհնած, մարիենի լեզուն էս-  
տեղ, մենք էստեղ. չը փախաւ հօ: Էսօր էլ

ուզեմ կը սովորցնեմ: Ակո՞ տք էտօմ գու-  
մայէտ... բայց ուսերէնի համար գեբերնանտ-  
կա եմ բռնել, տարէնը հարիւր թուման  
ժալօվնա եմ տալիս:

— Շատ վաղվաղկոտ էք եղել...: Անդհակա-  
ռակը այդպիսով գուք փախցնում էք մայրենի  
լեզուն: Գոնէ դաստիարակչուհի վարձեցէք  
երեխաների 10—12 տարեկան հասակը մտած  
ժամանակից. մի ժամանակ, երբ երեխան բա-  
ւական վարժուած լինելով մայրենի լեզուին,  
ոյժ կարող է ունենալ սովորելու և երկրորդ,  
հետևաբար նաև երրորդ լեզուն: Թէ չէ երկու  
լեզուն ևս փաթաթել անմեղ, թոյլ մանկան  
շլնքին, կը նշանակէ ճնշել նրան մի ծանր  
բեռի տակ և թոյլ չը տալ, որ ազատ կարողա-  
նայ տիրել մէկին...:

— Է՛հ, թողէք, խնդրեմ, վաշէ փիլօսօփստվօ:

— Լա՛ւ, այդ թողնենք. բաս ինչի՞ց խօսենք:

— Բէ՛ֆից:

— Անքէ՛ֆ ժամանակ ուրեմն մտածեցէք  
այդ մասին:

— Պօսլէ, պօսլէ, ար էտօմ... տեսլեր նի  
դա չտօ:

— Բայց խնդրեմ, եթէ կարելի է, մի բան  
 ևս... գիւղացու կեանքի վրայ ի՞նչ հայեցակէտ  
 ունիք, պ. Երանեան:

— Խէ, փառք Աստուծոյ, ի՞նչ կայ գիւղա-  
 ցուն, ինչի՞ է նա կարօտ. վարուցանքը բճլ,  
 բաղ ու բաղչան շատ, հացն առան:

— Երկրի անբերրիութեան, սովի, մորեխի,  
 աղէտի ժամանակ...:

— Է՛հ, սովոր են, աղբաթխէր, շտօ տի  
 պատերեալ:

— Օգնել, օժանդակել ուսումնարան բանալու:

— Իմ ի՞նչ գործն է:

— Խորհուրդներ տալ, խրախուսել...:

— Է՛հ բան չունիս...:

— Վերջապէս իբրև կապիտալիստ, իբրև  
 միլիոնատէր...:

— Դ՛ա չեօրտ ըս նիմ սավսէմ: Ինչպէս կայ,  
 այնպէս էլ կը գնայ. սկազալ նի զա շտօ. — պա-  
 տասխանեց Երանեանը և դարձաւ դէպի երա-  
 ժիշտները, հրամայելով նրանց նուազել:

Քէֆը շարունակուեց:

Միրաքեանը և Ոսկանը ոչինչ մխիթա-  
 րական տպաւորութիւն չստացան Երանեանից:

Նրանք մեկնեցան Երանեսանի տանից քէֆի  
այն ժամանակ, երբ գինու ազդեցութեան  
տակ Երանեանը գիժ ինքնամոռացութեան  
աստիճանին հասած, հարիւրանոցների ծայրեր  
էր ցոյց տալիս սրան նրան և աչքով ունքով  
ծամած ու թիւններ անելով, շփոթուած լեզու-  
ով կրկնում «քէֆ արա, ա՛ն:» Իսկ նրա այդ  
լիմար բացականչութիւնների ժամանակ սա-  
ղանդարները աչքները չորս էին անում և  
ականջները պլըշում թէ՛ հիմա չէ, մի քանի  
րոպէից լետոյ, գինովցած վաճառականը դէպի  
իրանց կը շարտէ կանաչ կարմիր թղթերը:  
Բաւական էր մի դուրեկան եղանակ, բաւական  
էր մի լաւ պարոզ և նա շռայլում էր իր  
«շաբաշները»: Պարելու առաջին քայլն արաւ  
ինքը Երանեանը. նա իր անճոռնի մարմինը  
մէջ նետեց և անճոռնի կերպով պարելով, միայն  
կեղծ ծիծաղ և խորին զղուանք պատճառեց  
հիւրերին: Ծուռ ու մուռ անելուց և մի սկան-  
զալ գործելու երկիւղից՝ արբած Երանեանին  
մի հանգով դուրս բերին պարի մէլդանից:

Պարը թնդուեց:

Միրաքեանը և Ոսկանն արդէն դուրս էին

գնացել: Նրանք լուսամուտների տակով, խորին զայրոյթով լցուած դէպի Երանեանը, անցնում էին, երբ ներսից լսուեց սազանգարների «այ շաբա՛շ, էլի Պօղոս-աղան շէն կենայ» բացականչութիւնը: Երբեմն էլ նրան կանչում էին շաբաշի ժամանակ Պօղոս-բէգ, կամ պարոն Պօղոս: Իսկ Պօղոս-ապեր կանչելու ժամանակ սաստիկ վիրաւորւում էր նրա ինքնասիրութիւնը և երբեմն երբեմն խօսքի մէջ, հասկացնելու համար, նա ակնարկում էր, որ Բագու իրան միշտ Պաւլ Իւանիչ են կանչում...: Որքան սարսափելի էր լինում նրա զայրոյթը մանաւանդ այն ժամանակ, երբ գիւղացի բարեկամները կամ նախկին ընկեր—հարևանները նրան իր հին անուսով «Պուղի» կամ «այ Պուղ» էին կանչում:

Եւ ո՞վ կարող էր պնդել, թէ Երանեանի սառնասրտութիւնը դէպի գիւղացին, դէպի հայրենի հասարակական գործ, առաջ չէր գալիս այդ տեսակ յիմար, մանկամիտ առիթներից, այն, թէ ինչո՞ւ իր ընկերը, գիւղացին պարզ, մտերմական սրտով նրան «այ Պուղ» է կանչում...:



**Ե.**

— Զարմանալի են մեր մէջ առաջին դասակարգը բռնող մարդիկ: Մարդ չի կարողանում ոչ մի կերպ իրան հաշիւ տալ, թէ դրանք ինչ արարածներ են:— Ասում էր մի օր Միրաքեանը, Ոսկանի հետ խօսելիս:

— Դու առաջին դասակարգ ասելով քաղաքացոց ես ակնարկում, թէ՞ գիւղացոց:

— Առ հասարակ...: Բայց, իհարկէ, իմ նայած տեսակէտից քաղաքացին աւելի դատասարտելի է, դատասարտելի՝ որ նա իր հարստութեան հետ միասին հասկացող, դատող է, բայց չափազանց անտարբեր և ժլատ: Ինչքան ես պեսսիմիստ լինեմ այս հայեցակէտում, այնուամենայնիւ հասարակաց կարծիքը, պրօլետարիատը, հարստութեան մէջ երևակայում է չափազանց մեծ խելք, կարողութիւն և ոյժ, ամեն դժուար գործ գլուխ բերելու, ամեն դժուար հարց լուծելու: Ենթադրենք թէ՛ խելքի վերաբերմամբ նա չարաչտր սխալւում է, բայց կարողութեան, ոյժի վերաբերմամբ նրա կործիքը խօ՞շատ բնորոշ է: Եւ իրաւ,

ինչե՛ր չի կարող անել ոյժը, դրամական ոյժը. մի՛թէ նրա մէջ չէ պրօլետարիատի կարծած խելքն էլ, գիտութիւնն էլ, դժուար հարցերի լուծումն էլ: Այս կէտում ես համակարծիք եմ պրօլետարիատի հետ: Օրինակ, ո՞վ է դաստիարակչուհի վարձում Երանեանի երեխաներին կրթելու, նա թնքը, թէ իր փողը: Ես հաւատացած եմ որ փողն է յղացել և ստեղծել այդ միտքը, քան թէ Երանեանի խելքը:

— Եթէ այդպէս ես հաւատացած, Սեդրակ, ինչո՞ւ հապա այդ միւսնոյն փողը նրա գրպանից չի դուրս գալիս և որ և է բարեգործութեան չի գնում:

— Փողի գործադրողը ինքը տէրն է: Յայտնի բան է նա այնքան էլ խելագուրկ չէ, որ չը կարողանայ իր անձնական, իր շապկին մօտիկ պահանջը տարբերել երկրորդական, իրանից անկախ, պահանջից: Նա ազահ է, չի ուզում իր կարողութիւնը ցրիւ տալ. նա կարծում է թէ՛ աշխարհի տուտը բռնած, մինչև նրա վերջն ապրելու է, ուրեմն և աշխատանքից զրրկուելով հազիւ է բաւականանալու իր կարողութիւնը իր ամբողջ կեանքի ընթացքում: Այդ

է գլխաւոր պատճառներից մին, որ նրան չի թողնում բարեգործութիւն անելու: Իսկ ասել թէ բոլոր հարուստներն այդպէս են, այդ առնուազն անմտութիւն կը լինի: Կան մեր մէջ լայանի բարեգործներ ևս, սակայն դրանց թիւն անքան քիչ է, որ մարդ օտարի առաջ կարող է կարմրել, ասելով, դիցուք, թէ հարիւր հարուստի մէջ մի բարեգործ ունինք միայն, որ կարող է բարեգործի անունը, փառքը և պատիւը վայելել պատմութեան մէջ: Այնինչ հարիւրին յիսուն, քառասուն, երեսուն, զոնէ քսան տոկոսը մեր հարուստներից պէտք է բարեգործ լինի, որ ասենք թէ մենք էլ ազգ ենք, մենք էլ ձգտում ունինք առաջ գնալու...:

— Ուրեմն դրանից պէտք է հետեցնենք, որ մենք որ և է բարի ձգտում չենք կարող ունենալ, հետեւաբար և պէտք է յուսահատուենք մեր հարուստների անտարբերութիւնը տեսնելով:

— Երբէք յուսահատուելու տեղիք չը պէտք է ունենալ և ոչ էլ միանգամայն լոյս դնել հարուստների վրայ: Այդ կը լինի մի միջոց սառցնելու ժողովուրդին իր ճակատի ոյժով և

յատուկ աշխատանքով իր նպատակին հասնելուց: Եթէ ժողովուրդը միանգամայն իր յոյսը դնի հարուստի վրայ և մենք աւելի նպաստենք նրա այդ մտքին, կը նշանակէ մենք սովորեցնում ենք նրանց մի ծոյլ, անհոգ, մեռած կեանքի, որ միայն ձրիակերներին է յատուկ: Սակայն այս ժողովրդի դրութիւնը և բազմակողմանի պահանջները տեսնելով՝ ես չեմ ասում թէ՛ դիցուք, մի ամբողջ ուսումնարանի լաւապէս պահպանութիւնը նրա վզին կապել: Բայց և չեմ ասում թէ՛ նա իսկի աշխատանքի մատ չունենայ այդ գործում և ամբողջապէս խնամուի հարուստի տուած փողով: Ուրեմն հարկաւոր է նախ՝ ժողովրդին սովորեցնել իր կարողացածին չափ օգնելու գործին և երկրորդ՝ կռուել, խիստ կերպով յարձակուել մեր կապիտալիստների անտարբերութեան վրայ, քննադատել նրանց սառնասրտութիւնը, շարժել նրանց, առաջ քաշել և դնել դրութեան այնպիսի բարձրութեան վրայ, որ նա հասկանայ ինքնաբերաբար բաժին հանել, առատ բաժին բարեգործութեան՝ այն գործին, որը ծառայում է ընդհանուրի շահերին, որը փրկում է

տգիտութիւնից աղքատ դասակարգի երեխաներին, որը գրաճանաչութիւն է մտցնում խուլ անկիւններում խարխափող և աշխարհից տեղեկութիւն չունեցող գիւղական տարրի մէջ: Ես կրկնում եմ իմ խօսքս, որ ինչքան էլ գիւղական ժողովրդի տնտեսական դրութիւնը քայքայման մօտ լինի, ո՛չ մի ոյժ, ո՛չ մի միջոց չի կարող վերակենդանացնել այդ դրութիւնը, եթէ ոչ ուսումը: Դու շատ նեղ մտքով չընդունես «ուսում» խօսքս, այլ ընդարձակ, լայն մտքի բազմակողմանի ճիւղերով և նշանակութիւններով: Ուսումն է տալիս մեզ ուսումնական քահանայ, ուսուցիչ, ժողովուրդ, իսկ այդ փոքր ի շատէ քաղաքակրթութուած տարրը հասկանում է իր պէտքերը, պահանջները և ժամանակին համապատասխան կենցաղավարութիւնը: Ուսումն է դրդում մեզ դէպի գործ, դէպի արհեստ, դէպի զանազան մասնագիտութիւն և մենք այդ ամենը ունենալով, ունենալով և զբանց գործը մեր մէջ, գիւղում, չենք վախճիլ օտարութիւն: Ուսումն է վերջապէս մեզանից ստեղծում մի տարր, որ կարողանում է կուլտուրապէս ստեղծել և

ստեղծագործել արուեստ, գիտութիւն և քաղաքակրթուած հասարակութիւն...: Ուսման բացակայութիւնը չէ՛ արդեօք, պարտաճանաչ քահանայի և բարեխիղճ տանուտէրի բացակայութիւնը չէ՛, որ այսօր ժողովուրդը հեծում է աղքատութեան մէջ իր հարկերի ծանրութիւնից, հարկերի՝ որ գիւղացին տալիս է և՛ կալուածատիրոջ, և՛ նրա կառավարչին, և՛ կառավարչի ծառային: Նա տալիս է մինչև այն աստիճան, որ նրանք կշտանում են. իսկ տալով դատարկում է նրա շտեմարանը և նա մնում է սոված: Նա տալիս է, որովհետև գիւղական գործող ոյժերը մի փրկանք են համարում այդ հստուցումը գիւղացու կեանքը խաղաղութեան մէջ պահելու համար և այդպէս հասկացնում, այդ սովորութեամբ ներշնչում գիւղացու հպատակութիւնը. իսկ դա կալուածատիրոջ առջև լաւամարդի դառնալու մի նպատակ է, մի միջոց, և ոչ այլ ինչ: Ինչո՞ւ պէտք է ժողովուրդը տուժէ, ինչո՞ւ պէտք է նա կրկին և երեքկին հատուցանէ: -- Որովհետև սովորել են միշտ տալու և աչքներն այնքան վախեցել է տալուց, որ նրանք խորթ

աչքով, մինչև անգամ թշնամաբար են վերա-  
 բերւում այն մտքին, որը իրանց ապագայ շա-  
 հերի օգուտն է թելադրում: Գիւղական ժողո-  
 վուրդը մի տեսակ կորցրել է իր հաւատը դէպի  
 այդ պաշտօնականները, որովհետև նրանք լա-  
 ճախ ի չարն են գործ դնում այդ հաւատը:  
 Անթիւ դէպքեր գիւղացու կեանքի էպիզոդ-  
 ներից, որ դրւում են աշխարհի առաջ այդ  
 կեանքի բազմաթիւ պատկերներով և վէպիկնե-  
 րով, ցոյց են տալիս գիւղական կառավարիչ-  
 ների սխրագործութիւնները դէպի նիւթապէս  
 և բարոյապէս ընկճուած գիւղացին: Խեղճ է,  
 թշուառ է այս ժողովուրդը, պէտք է հաս-  
 կացնել սրանց, պէտք է համերաշխ սպհել և  
 ոյժ ստեղծել, որ այդ ոյժը կարողանայ դի-  
 մադրել կեղեքումներին, վաշխառութիւններին  
 և շունչ տալ ժողովրդին: Գուք իրար ոտի  
 ասկ քանդում էք: Միմիանց ձեռքից խլում  
 էք վարելահողը: Ով ոյժ ունի, զօռով է, նա  
 քսան, երեսուն, յիսուն օրավար ունի. իսկ ով  
 խեղճ է, թույլ է, նրա հինգ տասր օրավարն  
 էլ ուզում են ձեռքից խլել: Հաւասար հողա-  
 բաժանութիւնը ամենաարդար միջոցն է. բայց

կան ձեզանուժ այնպիսի մարդիկ, որոնք պատ-  
ճառ են բերում, թէ դա մի դարաւոր ժա-  
ռանգութիւն է՝ մնացած մեր նախահայրերից:  
Շատ հեռու կը գնայինք, եթէ ասէինք իւրա-  
քանչիւր հինգ կամ տասն տարուց մի անգամ  
պէտք է կրկին բաժանէք հողը, փճակ ձգէք,  
հաւասար մարդագլխու բաժին գնէք: Այդ կա-  
րելի է անել, բայց ո՛չ շուտ...: Քանի որ ձեզ  
համար վաղաժամ է այս միջոցը, թո՛ղ քիչ  
հողատէրն էլ ուրիշ գործով պարապուի, թո՛ղ  
նա էլ արհեստ սովորէ: Մեթէ գիւղացիք բո-  
լորը երկրագործ, մշակ պէտք է լինին: Թո՛ղ  
մէկն էլ ածխագործութեամբ պարապուի, մէկը  
շերամալահութեամբ, մէկը դերձիկութեամբ,  
մէկը արծաթագործութեամբ, մէկը հիւսնու-  
թեամբ և այլն և այլն: Ամեն մի արհեստ պէտք  
է գալիս մեզ գիւղում: Ուրեմն հարկաւոր է ար-  
հեստի վրայ ուշադրութիւն դարձնել և սլար-  
տաւորական դարձնել գիւղացուն համար. նա  
իր ուշ ու միտքը միայն երկրագործութեան  
վրայ չը պիտի դնէ և հողի սակասութեան  
պատճառով մէկը միւսի միսը չուտէ...: Վեր-  
ջացնելով իօսքս ևս կասեմ, որ համերաշ-

խուլ թիւնը խաղաղ կեանքի հօր գրաւականն է և աշխատանքը այդ կեանքի պահպանող ուժը. դրանք անբաժան պէտք է լինին միմիանցից: Դրանից չետոյ, ուսումը ձեր աչքաբացութեան և լառաջագիծութեան նեցուկն է. իսկ ժողովրդի ղեկավարը, թագն ու պսակը լաւ, ընտիր քահանան է, որ ղեկավարելով այդ ժողովրդին, բանում է նրա աչքը գէպի գիտակցական գործ և աշխատանք, դարձնում է նրան ճշմարիտ քրիստոնեայ, ազգութեան պիտանի անդամ, դարձնում է մի ժողովուրդ, որ չը գիտէ զրկել, գողանալ, կեղծել, ստել, ատել, թշնամանել...:

— Բայց այդ ամենը որքան միջոցում մենք կարող ենք գլուխ բերել...:

— Ունեցէք համերաշխութիւն, հաստատուն կամք, ցանկութիւն և ինքն իրան կը յղանայ ձեր սրտում և ծնունդ կառնէ իմ ասածները:

— Իսկ առանց ղեկավարի, առանց սերմնացանի չեմ կարծում թէ այդ ասածներդ գլուխ գան...: Ա՛խ երանի այն ուսումն ունենայի, որ կարողանայի քեզ չափ խօսել և ազդել սրտերի վրայ, Սեդրակ:

— Ի՞նչ կանէիր, Բնչալէս կը գործէիր, Բնչ  
Տառայութիւն կանէիր հայրենիքիդ:

— Ուղղակի ուսուցիչ կը դառնայի, ուսում-  
նարան կը բանայի, կը կրթէի մեր գիւղի  
երեխաներին, կը քարոզէի ժողովրդին դէպի  
ճշմարիտ աստուածապաշտութիւն, դէպի աշ-  
խատանք, դէպի գիտակցութիւն... և ո՞վ գիտէ,  
ինչե՞ր կանէի:

— Տէր-Բաղդասարի նման...:

— Օ՛, Աստուած ո՛չ անէ: Ես ինքս հիմա  
էլ չափում եմ նրա գիտութիւնը, նա ի՞նչ  
գիտէ որ...:

— Ես հաւատացած եմ, որ մեր բոլոր գիւ-  
ղերն էլ թշուառ են քահանայի կողմից, Ոս-  
կան: Մի կողմ մնայ մի բոլոր ուսումնարանի  
խնդիրը և թողնենք դեռ ժողովրդի տնտեսա-  
կան խարխուլ դրութիւնը, հողային հարցը,  
կալուածատիրական իրաւունքները, նրանց ճըն-  
շումները և խօսենք, ընդհանրապէս ասած,  
քահանայական հարցի վրայ, ասո՞ խնդրեմ,  
այսօր ո՞ր գիւղում կայ պարտաճանաչ քահա-  
նայ, որ կարողանայ պարտաճանաչ ժողովուրդ  
պատրաստել: Այդ դէպքում ժողովրդին միան-

գամայն մեղադրել անկարելի է: Նա դեռ նահապետական կոպտութեան մէջ է, դեռ արգիտութեան թանձր խաւարը պատած է նրա սրտին: Ուրիշ բան է, որ հազարից մի գիւղ կարող է այսօր լաւ քահանայ ունենալ, դա բացառիկ և հազուադէպ մի երևոյթ է համարւում և չի պսակում ընդհանուրի յոյսը և ոչ իսկ, կարելի է ասել, նոյն հօտի յոյսը:— Ընդհանրապէս ասած, բոլոր գիւղերը թշուառ են այդ կողմից...:

— Ուրեմն դու համոզուած ես, Սեդրակ, որ մեր գիւղերի գլխաւոր թշուառութիւններից մէկը պարտաճանաչ քահանայի բացակայութիւնն է և միակ փրկարար միջոցն այդ թշուառութիւնների, ձեր կարծիքով, ուսումնական քահանայ ունենալն է:

— Ո՛չ թէ գլխաւոր թշուառութիւններից մէկը, այլ, կասեմ ես, գլխաւոր թշուառութիւններից գլխաւորը: Այս ժողովուրդը ծարաւ է միանգամայն: Քահանան է, որ կարող է յագեցնել նրա ծարաւը, այն քահանան միայն, որ ունենայ յագեցնելու կարողութիւն: Այս ժողովուրդը շատ էլ տգէտ չէ: Այս երկու

ամսուայ փորձն ինձ ցոյց տուեց, որ նրա ներքին, հոգեկան աշխարհը, նրա զգացմունքը շատ էլ քարացած չէ: Նա կարող է լսել և բաւական է որ լսում է խօսքդ և ուշադիր է լինում նրան ըմբռնելու, մի հինգ տասն անգամ լսելուց կը հասկանայ, կը համոզուի, որ խօսածը իր բարօրութեան, բարեկեցութեան է վերաբերում և մի անգամ էլ լսող կը լինի կատարելու: Ուսուցիչը, քահանան, դաստիարակը յուսահատուելու պատճառ չը պէտք է ունենայ, եթէ ժողովուրդը նրա առաջին, երկրորդ, երրորդ անգամ խօսածը բանի տեղ չը գնի: Ծաղրի և ցնորքի տեղ անգամ ընդունեն խօսքդ, դարձեալ չը պիտի վհատուիս: Եթէ խօսքդ հաստատ հիմքի վրայ լինի և հողը, որի վրայ ցանում ես, լինի պարար պտղաւետ անելու, ինչքան էլ նա հողմերի հանդիպի, տլնուամենայնիւ պտուղ կը տայ: Ուրեմն ինչո՞ւ յուսահատուի այն մշակը, երբ տեսնում է, որ հողը, որի վրայ ինքը սերմել է ուզում, կատարեալ բերրիութիւն է խոստանում: Այդպիսի հողի համար բաւական է, որ մշակն ունենայ իր մասնագիտութեան, իր արուեստի

տարրական գիտութիւններն ու փորձերը: Ուրեմն է այսպիսի ժողովրդի համար բաւական է, որ քահանան լինի բարոյական, արժանաւոր և ընդունակ կատարելու այն, ինչ որ ժողովրդի շահերն են պահանջում: Բայց ինչո՞ւ չունենալ այդպիսի քահանաներ, մի՞թէ դժուար է: Ո՛ւր են գնում մեր ձեմարանից և թեմական դպրոցներից աւարտողները, ո՞վ պէտք է հոգայ, մտածէ այդ մասին, ո՞վ պէտք է նրանց ձեռքից բռնէ ու առաջ քաշէ, ահա հարց, որ արժանի է ուշադրութեան:

— Ե՛, Սեդրակ, համարձակ կարելի է ասել, որ մերժում են ձեմարանաւարտներին և դրսւրոցաւարտներին քահանայ լինելու, եթէ միայն չափազանցութիւն չէ ասածս:

— Ո՞վ է մերժում և ի՞նչպէս կարող են մերժել, եթէ նրանք ցանկանում են:

— Ս.հ.ս. ինչպէս: Տգէտ տիրացուներն իրանց բարեկամներն ու ազգականներն առած, էլ հանգստութիւն չեն տալիս իշխանութեան. ամեն օր մաշում են նրա դռները, զահլա են տանում, մինչև որ աջողցնում են տգէտ տիրացուների ձեռնադրութիւնը: Ս.սպարէզը

տգէտներին մնալով, գիտունները խոյս են տալիս նրանից: Աւելի ճիշտն ասած, նրանց չեն խրախուսում և իրանք սառչում են: Իսկ ինքնաբերաբար գալ, մտնել և գործել, կռուել անտարբերութեան դէմ, կռուել ներս սպրդող տգէտների դէմ, կարծես չէ տուած մեր ուսումնական երիտասարդներին:

— Բոլորի համար այդպէս չի կարելի դատել, Ոսկան: Շատերը կան ուսումնականների մէջ, որոնք փափագ և ձգտում ունին դէպի հոգեւորական կոչում, բայց այդ մէկն իրաւ է, որ նրանց չեն խրախուսում, առաջ չեն քաշում: Առաջ քաշողը, իհարկէ, ժողովուրդը պէտք է լինի. իսկ մեր ժողովուրդը գեռ այդքան զարգացում չունի: Եւ քանի որ նա գեռ շատ յետ է կանգնած իր զարգացման չափով, մնում է որ հոգեւոր գլուխները բարեխղճութեամբ կատարեն այդ գործը. համոզեն ուսումնականներին, թէ անհրաժեշտ է ձեր մուտքը ժողովրդի մէջ, և ժողովրդին հասկացնեն, թէ հարկաւոր է ձեզ ուսումնական քահանայ...: Երբեմն մի միտք է ծնում իմ գլխում— լինել գիւղում քահանայ և

ուսուցիչ: Շատ դուր է գալիս ինձ գործել  
 գիւղական ժողովրդի մէջ և հաւատացած եմ,  
 որ օգուտ կարող եմ տալ: Ամենեւին սրտիս  
 վրայ չի ծանրանում մի երկիւղ, որ իբրև  
 փափուկ սլալմաններէ մէջ ասլրած ընտանիքի  
 զաւակ, անկարող լինեմ տանելու գիւղական  
 կեանքը: Եթէ մարդ ունենում է սէր և ձրգ-  
 տում, այդ տեսակ արգելքներն աչքին չեն  
 երևում: Ո՛ւր է թէ վերջացրած լինէի ուսումս.  
 Հենց այսօրուանից կը մնայի այստեղ...: Կը  
 մնայի և խիստ կը բողոքէի այն անտարբե-  
 րութեան դէմ, որ ունեն գէսլի գիւղ մեր ու-  
 սումնականները, գոնէ գիւղական տնակից  
 դուրս եկածները, որոնք անտես առնելով իրանց  
 ծննդավայրը՝ միշտ ձգտում են գէսլի վեր,  
 գէսլի քաղաք, գէսլի շլացնող պաշտօններ:  
 Կը բողոքէի և նրանց ուշքը կը գարձնէի  
 գէսլի գիւղ...:

— Ո՛ւր է, երանի՛ թէ իրագործէիր այդ  
 ցանկութիւնը... Երանի՛ թէ ուսումնական-  
 ներդ չը մոռանայիք մեզ, չը մոռանայիք  
 գիւղը... ասում էին ամեն մի կողմից գիւղի  
 այն երիտասարդները, որոնք հաւաքուելով

ուսանողի շուրջը, լսում էին նրա խօսակցութիւնը:

— Ես պիտի աշխատեմ իրագործել ցանկութիւնս... կրկնեց Սիրաքեանը:

## Գ.

Թաթոս-ապերը իր կարճ կոթաւոր չիբուխը ջրբից հանեց, դուրս քաշեց գօտուց գոյնգգոյն թելերից կարած բերանին էլ փունջիկաւոր և յուլունքաւոր քող անցկացրած թամբաքուի քսակը, ետ տարաւ քշկուռը, լայն բացաւ բերանը, դրաւ առջևը՝ գետնի վրայ, միջից հանեց չախմախը, դաւը և չախմախաքարը, չիբուխը լցրեց, դաւը վառեց, վրան դրաւ և բերանին կծելով սկսեց բոլոր ոյժով քաշել: Քաշեց, քաշեց այնքան, մինչև որ թունդ վառուեց, ծուխը մինչև փորը կուլ տուաւ, կրկին լետ փչեց, քթածակերից հանեց, բերանից էլ քլքլացրեց, օդի մէջ լցրեց ու ինքը մի տեսակ հանգստութիւն զգացած, իրիւ վշտից ամօքուած՝ սրտի խորքից խոր թառանչ քաշեց...: Նա վերջին անգամ ևս

չիբուխը պինդ կծեց, մի ինչ որ մումուոց հանեց, զայրոյթից ճակատի կնճիւռը կիտեց և վերջապէս բերանից հանելով՝ պինդ թքեց գետնին, դուրս թափեց չիբուխի ծխից գոյացած բոլոր ժահրը, կարծես հետը թափելով և սրտի վիշտը, և դարձաւ իր որդիներին.

— Գնան, գնան, թող դեռ դրանք գնան օտարութիւն. բայց որ մի քանի տարի մնալով էլ չես չեն գալ, այն ժամանակ ես կասեմ դրանց... երկու ձեռք կանեն մի դլուխ, բայց ծուխ ու մուխը քթներիցը դուրս չի գալ: Հիմա ասի ու ասի, այնքան ասի, որ դլուխդ ուռչի: Ո՛վ է խելքը գլխին ջամ անողը և խօսքդ բանի տեղ դնողը, ո՛վ է համոզուողը թէ՛ օտարութիւնը չէ իրան հաց տուողը, այլ իր վարուցանքը, իր հողը, իր գիւղը, իր բաղ ու բաղջան...:

Ծերունու զայրոյթը Չատուն տղի մասին էր: Եւ նա շարունակեց իր խօսքն այսպէս.

— Ծախ է բռնել մարդը իր մուկքը: Գոնէ խելք անէք դուք առնէք, շան գէլի ճանկ չընկնի, էլի մի բան է: Ախր ասենք ինքը չունի նամուս, որ խտրութիւն չի դնում գիւղացու և օտարի — հայի և թուրքի մէջ, դուք

էլ չունիք: Մի լսող լինի, մի տեսնող լինի, բա չի՞ ասիլ թէ այս գիւղացիք ինչքան աննամուս են, որ իրանց շինականի հողը թուրքի ձեռք տուին. մէկի գրպանում մի քանի հարիւր մանէթ չը կ'ա՛ր, որ տար առնէր...:

—Դէ ինչ անեն Գ-եցիք Չատուն տղին հետ. չես տեսնում ոտը որտեղ է դրել:—Ասաց Ոսկանը:

—Ո՛րտեղ է դրել:

—Հինգ—վեց հարիւրիցն է բռնել... ասում է մի հատ կոպէկ սլակաս չեմ տալ. ո՛վ ուղում է առնի, ինձ համար միւսնոյն է, ասում է, միայն թէ փողը թամամ տան:

—Տեղն է... ախր ինչի՞ չէք կապոտում վեր քցում, որ չը կարողանայ գնալ. ինչի՞ էք երես տալիս, որ հայ ու թուրքն իրարից չը ջոկէ, իրան հային մի առաւելութիւն էլ չը տայ, մի տարբերութիւն չը դնի:

—Ի՞նչպէս կապենք, ասկեր:

—Կանգնեցէք, ասացէք մեր ընհաթաղբերն ես, մեզ հետ նստի, քո հօր հողը վարի, մուլքը բիջարի, կեր: Թէ չէ գնալով գնալով դատարկուեց մեր գիւղը պրծաւ, էլ մարդ չը

մնաց: Տեղից վեր կացողը օտարութիւն է ա-  
սում, երեսին խաչակնքում, մահակի միջից  
պինդ բռնում, ճանասպարհ ընկնում. ո՛ւր, ինքն  
էլ չը գիտէ. որտեղ բաղդը նրան կը ժպտայ:

—Ոչ մի խրատ, ոչ մի յորդոր չէ ազգում  
մարդուն: Ապառաժ քարից էլ պնդացել է նրա  
սիրտը: Եթէ նա մտածէր—մի հայրական տուն,  
այգի, վարելահողեր նրա համար մե՛ծ մուլք  
է: Սակայն ոչ նրա ազգականների ու բարե-  
կամների աղաչանք պաղատանքը և ոչ որևէ  
սպառնալիք չեն կարողանում նրա յամառու-  
թիւնը կոտրել: Հայրենի հողը նրան չէ գրա-  
ւում: Նրա աչքում այդ մուլքը մի աւելորդ  
որս է, մի աշխատանք, որ պիտի նաղդէ,  
գրպանում դնէ ու տանէ այնտեղի Մաշա—  
Նատաշաների համար: Ահա ինչպիսի հանգա-  
մանքներ են քաշում նրան դէպի օտարութիւն.  
ահա ի՛նչ է նրան գրաւողը: Իսկ հայկական  
օջախից, գիւղական տնակից դուրս եկած և  
հայելու նման պարզ, անարատ, անխառն  
«հիւրի մալակները» չեն գրաւում նրան...:  
Հա՛, աճուրդի է հանել մարդն իր մուլքը:  
Գիւղացիք ցած գին են տալիս, իսկ թուրքը

բարձր: Եւ դրա համար Սերգէյը 400 մանէ-  
 թով չի տալիս իր զիւղացիներին, այլ տալիս  
 է թուրքին 450-ով: Գիւղացիք էլ ջան են  
 քաշում միանգամից նրա ասածը տալ և դրա-  
 նով նրա աչքը հանել: Բայց չեն տալիս նրա  
 համար, որ առնող թուրքը բէգի թուրքերիցն  
 է, վախում են, որ գլխներին մի խաթա գայ  
 դրանցից...: Ահա մինչև սր աստիճան խեղճ,  
 թուլասիրտ, երկչոտ արարածներ են Գ-եցիք:  
 Փոխանակ մտածելու, որ իրանց մէջը թուրք  
 տնատէր, այգետէր մտնելով՝ նրա ձեռին օր  
 ու բարի չեն ունենալ, ուրեմն և պէտք է  
 կրկնասպառիկ տան և իրանք առնեն, իրանց  
 ձեռքի տակ մնայ, ընդհակառակը թուրքի  
 տուածից էլ պակաս զին են առաջարկում:  
 Եւ այդ ամենը— թուրքի ահից... որքան ստոր  
 երկչոտութիւն: Ես իմ Աստուածը, ես չեմ  
 մեղադրում Սերգէին. մեղաւորը մենք ենք,  
 մենք:— Ինչո՞ւ ենք նրա կող ու բէգառը քա-  
 շում, նրա գլխի հարկը տալիս, որ էսօր գայ  
 այգպէս անի: Ինչո՞ւ հենց առաջին անգամը,  
 երբ տեսնում էինք իրան գլխի հարկը չի զըր-  
 կում, նաչալնիկի ձեռքով ըռըխին վրայ մինչև

այստեղ քաշ տալով չենք բերել, որ դայ իր պարտքն ինքը ճանաչի: Ընդհակառակը կանգնում էինք ասում Սաքին լաւ տղայ է, հասկացող է, տեղ գիտէ, նրա ցաւը մենք քաշենք, նա պարտավճար կը լինի և շնորհակալութիւն կանէ: Ա՞յս է այսօր մեր լաւութեան շնորհակալութիւնը. համ մուլքը տայ ուրիշի, համ մեր գիւղացուն ու գիւղի աղջկան կոպէկի տեղ չը դնէ, համ էլ մեզանից մի տուն բաժանուի ու գննայ: Բաս դրա մեղքը որ մերը չէ, ս՛ւմն է:

— Բայց մի՞թէ դա է բոլորը, Ոսկան, — հարցրեց նրա եղբայրը, Պուղին, — մի՞թէ մենք ազատուծ ենք պանդխտութեան հոսանքից մի Սերգէյով. մի՞թէ միայն Սերգէյն է, որ գնում է: Չէ՞ որ մենք այնտեղերք Յակօբ ունենք, Մուրադ ունենք. նրանց ճօրն ինչ պիտի լինի. նրանք ուր պիտի մնան: — Դրա հետքով չը պիտի գնան, կորչե՛ն, փչանան...:

— Բերել տանք:

— Ի՞նչպէս:

— Բերել տանք, էլի. չը գան, մենք ինքներս գնանք բերենք: Չե՛ն դալ: Ես կարծում եմ, որ ուզենք բերել տալ, կը գան. ի՛նչ

պիտի ասեն, որ չը գան. մէկն իմ քրոջ տղան է, մէկը քո հօրեղբօրն է, մէկը նրա քեռու տղան է—բոլորն էլ մեզ բարեկամ: Ամեն մէկս չէնք կարող մեր բարեկամին համոզել, որ գան: Չեն գալ, ինքներս կը գնանք բերենք: Մեր այս սիրուն հողերը, այս քաղցրահամ աղբիւրները, այս խիտ անտառները պակաս աշխատանքի դուռ բաց կանեն նրանց համար: Ինչէր, ինչ օգուտներ չենք կարող քաղել մեր շուրջը գտնուող աղբիւրներից:—Մինը կարող է ածուխ անել, մինը վար անել, մինը բոստան անել, մինը կրահոր տլրել, մինը գինի շինել, մինը արաղ քաշել, մինը տանձ ու խնձոր ծախել, մինը եմիշ—ձմերուկ վարել, մինը կաթ—մածուն ծախել, մինը իւղ—պանիր շինել, մինը արհեստ սովորել, և ամեն մէկը մի բանով ապրել. փառք Աստու, այնքան գործ կայ որ... քանի՞ մինն ասեմ. անող տղայ պիտի լինի: Տեսնո՞ւմ էք այդ թուրքերին: Դրանց աշխատանքի աղբիւրները համեմատաբար շատ քիչ են մերից. բայց անիրաւները պարապ չեն նստում.— ոչխար են պահում, բուրժը ծախում մեզ վրայ, իւղ ու

պանիրը ծախում մեզ վրայ: Մենք պարսպ նստում ենք, նրանք անում են և մեր փողը տանում...:

— Իէ նրանք աւազակութիւն էլ են անում: Ո՞վ կարող է նրանց արածն անել: Հայր կանէ:

— Խօ՛ բոլոր թուրք ժողովուրդը աւազակութեամբ չէ պարսպւում: Իմ խօսքը մշակ դասակարգի մասին է. նա ևս գործում է այնպէս, ինչպէս Հայր, դեռ աւելի եռանդով: Նա գործ չեղած և նեղ տեղ ընկած ժամանակը չի յուսահատւում. գտնում է քիչ աշխատանք և, իբրև սակաւապէտ, նրանով էլ բաւականանում է: Իսկ Հայր. մի քիչ ոտը ծռուեց թէ չէ, մի զօրբա մահակի միջից բռնած, մի սլորկ—ստուկ լիքը խուրջին էլ ուսին շալակած, օտարութիւն է ասում ու ճանապարհ ընկնում: Նա գնում է աննպատակ, առանց մտածելու թէ՛ աշխատանք կը լինի՞ թէ չէ: Գնում է միայն, հետեւելով ուրիշին և օտարութեան մէջ փչանալը մի խրատ, մի դաս չի համարում իրան համար: Արգտ՛րեւ, մի կատարեալ ախտ—և այդ ախտն է, որ սլտի արմատախիլ անենք գիւղացու յարկի տակից:

— Բերենք, բերել տանք, կտրենք այդ չար ախտի առաջը: Եւ այսուհետեւ բոլորովին չը թողնենք, որ գնացող լինի: Գիւղի ջահելը մենք ենք. մենք չը գնանք այդ ճանապարհը, կտրենք այդ կապը: Մեր ընկերներին, մեր հասակակիցներին, մեզանից փոքրներին, մեր լետականներին օրինակ դառնանք: Բայց առիթ որոնենք նրանց ոտը կապելու. աշխատանքի դուռ բաց անենք նրանց առաջ: Շատ ուղիղ ես դատում, Ոսկան, որ մեր երկիրը, մեր գիւղը, մեր գիւղի շուրջը գիւղացու համար աշխատանքի առատ աղբիւրներ են: Ո՛ւմ կը տան պարար վարելահողեր, խիտ անտառներ, սառնորակ աղբիւրներ, քէքչան գետակներ, առատ ջրեր...:

— Շատ լաւ, շատ լաւ, դրանք մեր անելիքըն է, մեր ձեռքին է, մեր գործն է, որ երբ լինի կարող ենք անել: Բայց դուք եկէք դեռ նրա՞ գարգը քաշեցէք, որ Չատուն տղան մուլքը մեզ նազդ չի տալիս, նիսիա ուրիշին է տալիս:

— Դա հաւատալի բան չէ. նա հէնց մեռնում է կտրում, որ հինգ տասը մանէթ էլ

պակաս լինի, միայն թէ նաղդ լինի: Չեզանից  
 ո՞րը նաղդ համարեց նրա առաջը, որ մերժեց:  
 Ասում էք նստում և հեռուից հեռու, մար-  
 դուն բամբասում. — Ասաց Թաթոս — ապօր  
 մեծ որդին:

— Մենք կառնենք, մենք... ես թուրքի  
 երկիրը բան չեմ իմանալ, թուրքն ինձ թնջ  
 է անելու: — Ասաց ծերունին:

— Ա՛խր արդէն թուրքի հետ պայմանը վեր-  
 ջացել է և տէրտէրը երաշխաւոր է. — սլա-  
 տասխանեց Ոսկանը:

— Փողը տուէ՛լ է:

— Ոչ, երաշխաւոր է:

— Դատարկ երաշխաւորութեամբ թնջ կը  
 լինի, փողն է խօսում. եթէ մէջ տեղ փող  
 լինի՝ Չատուն տղան թնջ պիտի ասէ, չի՞ քան-  
 դիլ պայմանը:

— Ես կարծում եմ, որ ամենայն ուրախու-  
 թեամբ կը քանդէ:

— Թուրքի ձեռից կը սլրծնի՞:

— Նա կը սլրծնի, մենք կը մնանք արնա-  
 տէր: Բայց ինձ համար կոպէկ չարժէ այդպիսի  
 բաները. ես սպառնալիքից վախող մարդ չեմ:

Վանչեցէք նրան այստեղ, փողը տանք, թող  
ըռադ լինի կորչի: Դէ որ չի ուզում մնալ,  
չի ուզում, ամենեւին չը թողնենք այստեղ  
ուրիշ մարդ մուլք առնի, ամօթ է մեզ հա-  
մար: Վանչեցէք զայ:

— Թուրքն այստեղ է, գլխի կընկնի, բանը  
խառնի: Թողէք էլի տէրտէրին կանչենք, նրա  
միջոցով լաւ է: Նա ինքն ուրախ էլ կը լինի,  
որ երաշխաւորութիւնից ազատուի:

Ծառան զնաց քահանային կանչելու. իսկ  
Թաթոս-ապերը մտնելով զարագամի կողքին  
շինած մի թաղաւոր քարուկրի սենեակ, հրա-  
մայեց իր մեծ որդուն, Պօղոսին, որ իրան  
հետևի: Այդտեղ ծերունին բացաւ մի մեծ,  
կաղնի փայտից շինած հաստ սնդուկ, միջից  
հանեց կեխտի մէջ կորած և իր օրում լուացի  
երես չը տեսած մի կտաւէ երկայն քսակ, ծա-  
լը ետ տարաւ և սկսեց համբել—մէկ, երկու,  
երեք... չորս հարիւր մանէթ, հերթիք է. եթէ  
տալիս է, ասա, համեցէք: Ոչ իրան պապերն  
են այդքան փող տեսել, ոչ էլ ինքը կարող է  
տեսնել թուրքից: Եթէ խելք ունենայ այս  
նաղդ չորս հարիւրը նրա նիսիա հազարից

շատ կը համարէ: Պարզ է, որ թուրքը նրան  
կօպէկ չի տալու...:

Շուտով Տէր-Բաղդասարը եկաւ: Ծերու-  
նին նրան յայտնեց իր ցանկութիւնը: Քահա-  
նան յանձն առաւ միջնորդի դերը և զորքը յա-  
ջողցնելու համար քսան ըուբլի խալաթ պա-  
հանջեց ծերունուց: Ծերունին չէր կարծում  
թէ տէրտէրը թուրքի երաշխաւորութիւնից  
ազատուելով հանգերձ քսան ըուբլի էլ խալաթ  
կուզէ: Զարմանար, վշտանար, թէ ծիծաղէր  
նա քահանայի վրայ: Ոչ մէկի և ոչ միւսի  
տեղն էր. եթէ նա խօսէր, քահանայի սրտի-  
սութիւնը երեսովը տար, գուցէ բանը փչացնէր:  
Նրա սրտիցանկութիւնը ոչ այնքան մուլք ձեռք  
բերելն էր, որքան հայի նամուսը թուրքի ոտի  
տակ չը տալը և թուրքին իր գիւղում մուլ-  
քատէր չը լինելը: Նա վճռեց տալ և քահա-  
նայի քսան ըուբլին: Քահանան շտապեց Չա-  
տուն տղին մօտ և յայտնեց Թաթոս-ասօր  
ցանկութիւնը:

—Տէրտէր, շան տամ, գէլի տամ, լաւ է,  
քան Թաթոսին. —ասաց Չատուն տղան:

—Ինչո՞ւ:

—Գու չես իմանում նա ինչ մարդ է, նրա որդիքն ինչ մտքի տէր են. մանաւանդ այն Ոսկանը, որ խելքը մի բան չի կտրում, բայց մեծ մեծ չափում է:

—Է՛հ, ի՞նչ գործ ունիս նրա հետ, ջահել է: Նրան էլ այն Մոսկովից եկած տղան էր խելքից հանել: Նա էլ գնաց պրծաւ:

—Ձէ, շատ վշտացրին ինձ:

—Գու խկի ինձ վշտացրածը չես ասում: Ինձ այն տեղը քցեցին, որ քիչ մնաց զանգատուեմ բռնել տամ: Բայց տէրն իրանց հետ, կը խօսեն կը խօսեն, ոչ մէկին մի վնաս չեն հասցնիլ, հենց կը մնայ իրանց խօսելը. նիսիա խօսքից մի կը նեղանայ: Ի՞նչ շինեցին, ի՞նչ արին. մեր ջահելները հենց մի այգալիսի վայրահաջութիւն կանեն, բայց որ խելքի գան, մէկ էլ տեղները սուս ու փուս կը նստեն և կը նայեն թէ՛ իրանց անխելքութիւնները խօտշխարհը չը լսեց և իրան չի դատապարտում հօ: Այդ թողնենք, Սարգիս, կոպէկ չարժէ... թողնենք ու մեր գործից խօսենք: — Գիտես, որ սրբան եմ քո խաթրը պահում. հարիւր թաթոս լինի, դու իմ աշակերտն ես,

քո մի եղունգը չեմ փոխիլ նրա հետ: Գիտեմ որ ուզում ես մուլքդ նաղդել. ես քեզ հայրաբար խորհուրդ եմ տալիս և հաւատացնում եմ, որ գիւղումս Թաթոսից նաղդ տուող չի լինելու, բեր առանց խօսելու փողն առնենք, տանք քեզ, վեր առ գնա՛:

— Իսկ թո՛ւրքը:

— Թուրքն ի՛նչ պիտի անի քեզ, էգուց անց ես կենում գնաս, նա էլ քեզ սրտեղ է տեսնելու:

— Ուրեմն քո երաշխաւորութիւնը...:

— Հա՛, իմ դրութիւնս էլ պիտի մտնես: Այդ անիրաւները մի վատ սովորութիւն ունին. մի բան անելուց, մի պայման կապելուց ո՛ւմ ետխա ձեռքիդ թողեցին, լաւիտեան նրան պիտի ճանաչես: Ես գիտեմ որ այդ թուրքը ո՛չ քեզ և ո՛չ ինձ մի կոսպէկ չի տալու: Բաւական է, որ ես երաշխաւոր եմ. Ժամանակը կը լրանայ և դու անշուշտ պահանջդ կը դարձնես դէպի ինձ...:

— Կարծիք չը կայ:

— Ուրեմն ես ի՛նչ շահ ունեմ մէջ տեղ, և դու ինչո՞ւ պիտի իմ վնասս ուզես:

—Ա՛խր մեր պայմանը 450 բուբլի է:

—Յիսուսն ըստբլին զոհիր այն ջանջալու-  
թիւններին, որ իմ գլխիս է գալու: Բացի  
գրանից, դու սկզբում ասում էիր յիսուսնը  
պակաս տուէք, նազդ տուէք:

—Այդ թուրքին ականջ էի ասում. բայց  
որ դու մէջ տեղ կաս, միթէ կորած պէտք է  
համարեմ:

—Ինձ բաշխիր:

—Լաւ բաշխեցի... —ասաց նա և երաշխա-  
ւորականը հանեց տուեց քահանային:

Նրանք գնացին գիւղի տանուտէրի մօտ:  
Թաթառի տղան մի քանի մանէթով ցելեց  
նաև տանուտէրի բերանը: Տէրաէրը գրեց զա-  
բալան, իսկ քեօխան վաւերացրեց, կնքեց և  
տուաւ Սերգէին: Նրանք շտապեցին ծերունու  
մօտ փողերն ստանալու...:

Հետևեալ օրը Սերգէյ Խրիստափորիչը  
իր ծերունի հօրն ու մօրը վեր առած և մի  
Ֆուրգօնի մէջ նստած ճանապարհ ընկաւ դէպի  
իր սիրած քաղաքը: Քերէմ-բէգը լսելով և կա-  
տաղելով Սերգէի այս վարմունքի վրայ, գնաց  
ճանապարհը կտրեց, որ վրէժ լուծի նրանից:

Ասում են մի մազ էր մնացել, որ թուրքը Սերգէի օրը սև անի, եթէ նա թուրք ֆուրգօնչու միջնորդութեամբ բէզին հարիւր մանէթ փոշմանփողի չը տար և մի կերպ ազատուէր...:

## Է.

Ո՞րտեղ մնացին ուսանող Միրաքեանի խորհրդածութիւնները: Ո՞ւր գնաց նա: Մի՞թէ արգարև լոկ և դատարկ խօսքեր էին նրա խօսածները, ինչպէս քահանան էր դատում: Մի՞թէ օղալին ամրոցներ էր, որ կառուցանում էր նա...:

Անցել էր ուղիղ եօթն ամիս, ինչ որ Միրաքեանը հրատեշտ էր տուել Գ. զիւղին և գնացել էր Մոսկուա ուսման վերջին տարին աւարտելու Լազարեան ճեմարանում: Ոսկանը, հակառակ Սեդրակի խոստման, եօթն ամիս շարունակ նամակ չէր ստանում նրանից: Այդ հանգամանքը բաւականին յուսահատութեան մէջ էր ձգել նրան:

Մի օր կէս — բարկացած, կէս — նեղացած,

Սեգրակի երկար լռութեան վրայ, որ այդքան ժամանակ իրան ոչ նամակ գրեց և ոչ իր խոստման վերջնական որոշումը յայտնեց, նա գանգատուեց հօրը և յայտնեց նրան իր սրտի նեղութիւնը:

— Ի՞նչ պարտական էր նա, որդի, որ մեզ այնքան խրատներ տալուց, մեր չարն ու բարին հասկացնելուց յետոյ, իրան էլ զոհ բերէր այդ գործին: Եթէ նա խոստանում էր գիւղն ընտրել իրան գործելու ասպարէզ, ես կարծում եմ, թէ նա այդ խօսքերով աշխատում էր ուրիշներին դրդելու, խրախուսելու, առաջ քաշելու: Իսկ նա այդ ուրիշներին դասին չի պատկանում. նա քաղաքացի է, իսկ ուրիշները գիւղացի են, որոնք գիւղական օջախից դուրս են գալիս, քաղաքում ուսում և գիտութիւն սովորում և գիւղական կեանքն անտես առնում:

— Իսկ ես այդպէս չէի հաւատացած. ես միանգամայն հաւատում էի նրա անկեղծ—անձնուիրութեանը: Եւ ինչքան էլ նա լռէ ու երկար ժամանակ նամակ չը գրէ, ինչքան էլ իր վարմունքով ինձ յուսահատութեան մէջ

Թողնէ, այնուամենայնիւ, ես միանգամայն չեմ կորցնում իմ յօյսը դէպի նա:

— Մենք պիտի ստեղծենք մեր միջից Սեդրակներ, մենք, և ո՛չ թէ նրանք պիտի գան և մեզ համար գործեն:

— Կը ստեղծենք... բայց առանց Սեդրակների խորհրդի, առանց նրանց միջամտութեան, դժուար է...:

— Օրինակ, եթէ ես Չատուն տղից առած տնատեղը նուիրեմ ուսումնարանի շինութեան համար, այն միւսը, այն մէկէլը ձրի մշակութիւն չեն անիլ, իրանց որդոց վրայ պարտք չեն դնիլ— գիւղ վերադառնալ, ուսում առնել և գիւղում գործել:

— Կանեն, բայց իհարկէ դարձեալ խրախուսող պէտք է:

— Այդ հէնց մի խրախուսանք կը լինի նրանց համար, որ ես ձրի տնատեղ տամ:

— Ուղիղ ես ասում, հայր, թէ օրինակի համար ես խօսում:

— Ուղիղ, ուղիղ: Հենց սկզբում, երբ փողերը համարում էի, որ Չատուն տղին տամ, իմ մէջ յանկարծ միտք չղացաւ, որ այդ տեղը

յատկացնեմ ուսումնարանի համար, իսկ միւս հողերը դարձեալ կապալով տամ մշակելու ուսումնարանի օգտին: Թէև մինչև այսօր ես քեզ այս մասին ոչինչ չեմ յայտնել, բայց այժմ ասում եմ վճռաբար, որ ինչ որ Չատուն տղից առել եմ, բոլորը նուիրում եմ ուսումնարանին և դնում եմ քո տրամադրութեան տակ, որ անես՝ ինչ որ հարկաւորն է— շինելու, մշակելու, և այլն և այլն:

— Իսկ շինութեան չե՞ս օգնիլ, հայր:

— Հինգ հարիւր բուբլի էլ կը տամ շինութեան համար: Թող գիւղացիք ձրի մշակութիւնը յանձն առնեն և մնացած պակասութիւնները հոգան: Երբ որ շինութիւնը պատրատ կը լինի և ուսումնարանի գոյութիւնը փոքր ի շատէ ապահովուած, այն ժամանակ Աստուած ինքը վարժապետ կը հասցնէ:

— Այն ժամանակ Աստուած մեզ մի Միրաքեան կը հասցնէ:

— Իհարկէ:

— Ուրեմն շինութեան համար...:

— Մի թուղթ շինեցէք, որ շէնքն սկսուի: Նայն օրը երեկոյեան գիւղի ջահէլները

լսելով Ոսկանից այդ աւետիքը, ամեն մէկը յայտնեց իր օգնութեան չափը և անելիքը:

Երևում էր, որ ուսանողի ցանած սերմերը խոր արմատներ էին գցել գիւղի երիտասարդների սրտում: Որովհետև մի շաբաթ չանցած այն օրից, երբ ծերունի նահապետը իր սեպհական հողը և իր գրամական նպաստը նուիրել էր ուսումնարանին, արդէն տնատեղի վրայ ուսումնարանի հիմքը անտրտունջ կերպով քանդում էին գիւղացիք, մի խումբ մարդիկ քար էին կրում իրանց գրաստներով, մի քանիսը աւազ, ոմանք կրահօր, էին այրում և չէին ասում թէ «սա էլ մի նոր հարկ էր, որ եկաւ մեր գլխին:» Իսկ Ոսկանը պայմաններ էր կապում վարպետների հետ...:

Գործին ծուռ աչքով էին նայում քահանան, տանուտէրը և մի քանի վաշխառուներ. վերջիններս մանաւանդ աւելի նախանձում էին, որ ծերունի նահապետը համ իրանց աչքը հանում էր քիչ տոկոս ստանալով, համ էլ բարեգործութիւններ էր անում:

Գարնանային մի գեղեցիկ օր, երբ Ոսկանը էշխի մէջ մտած կարգադրութիւններ էր

անում ուսումնարանի շինութեան, վարպետների և մշակների վրայ, քաղաքից վերադարձող մի գիւղացի, հենց ձիւ վրայից, տուաւ նրան մի ծրար: Ոսկանը ծրարի երկու կողմին նայեց և կնիքներն իսկոյն պարզեցին նրան փոստի նամակ լինելը: Նա բացաւ նամակը, շտապով ձեռքին նայեց—ստորագրած էր «Սեդրակ Միրաքեան», և սրտատրոփ սկսեց կարդալ.

«Սիրելի Ոսկան.

«Քեզանից մեկնելուց յետոյ չը գիտեմ ինչ դրութեան մէջ ես: Արդեօք հաշտուեցին գիւղացիք իմ և քո մտքերի հետ, թէ դարձեալ այլուում ես դրանց ձեռքին: Գուհիկներին բան հասկացնելը դժուար է, բայց չը պիտի դադարես և չը պիտի թուլանաս ասել խօսելուց...: Նամակս գրելու շարժառիթն է յայտնել քեզ մի նոր ու թիւն: «Նորութիւն» եմ ասում նրա համար, որ այս տեսակ անթիւ անհամար նորութիւններ յղանում են մարդկային ուղեղի մէջ, բայց ծնունդ չեն առնում: Խնչպէս քեզ գիւղում յայտնել էի թէ՛ շուտով կը վճռեմ գիւղական կեանք վարելու միտքս,

այնպէս էլ ահա այժմ դրականապէս գրում  
 եմ եւ հաստատապէս վճռում, ուխտ դնելով  
 ազնիւ խօսքի վրայ, որ ուսումս վերջացնելուց  
 անմիջապէս պատրաստ եմ իմ ծառայութիւն-  
 ները նուիրել իմ սիրած գիւղական ժողովրդ-  
 դին, որի կեանքն ինձ համար աւելի թանգ,  
 աւելի գնահատելի է, քան աշխարհի զանա-  
 զան փայլուն պաշտօններ: Ես ասել էի, խօսք  
 էի տուել, վարանւում էի, տատանւում էի—  
 և ահա վճռեցի: Այս տարի աւարտում եմ  
 լիցէյը և կարող եմ ստանալ փառաւոր պաշ-  
 տօններ, եթէ ցանկանամ, բայց չեմ ուզում  
 փառքեր, որոնք անհատական պէտք է լինին  
 և ո՛չ ընդհանրական, համայնական: Կարիերիստ-  
 ները միայն կարող են վայելել անհատական  
 փառք, իսկ ես, որ արբած եմ հասարակական  
 շահերի տենչով, միանգամայն ատելի է ինձ  
 համար կարիերիստութիւնը...: Գիւղական ժո-  
 ղովուրդը կարօտ է օգնութեան. նա գտնւում  
 է մեռելութեան և անկման զերեզմանի ա-  
 փին թէ՛ իր տնտեսական և թէ՛ մտաւոր ան-  
 շարժութեան կողմից, պէտք է փեշից բռնել  
 և նրան այդ ափից ազատել, հեռացնել: Նա

մոռացուած է մեզանից. բայց մի՞թէ մեզաւոր է: Ո՞վ է նրան հասկացնողը. հոգևորականը, որի ստուերն անգամ չկայ իրականութեան մէջ, ուսուցիչը, որ երազ է նրա համար, կամ եղածն էլ շատ տեղ ճնշուած, սահմանափակ շրջանում, վաշխառու աղաներին ստրուկ, գերի. կառավարիչը, տանուտէրը, որ տանուդէլ է, քան տանուտէր. գիւղի երիտասարդը, որ պանդխտութեան մէջ է մաշում իր կեանքի ծաղիկ օրերը. . . : Այդ մտքերն ահա, այդ հանգամանքներն ինձ ստիպում են մղել անձս դէպի գիւղ և այնտեղ կեանք վարել—կեանք՝ ժողովրդի համար: Թո՛ղ ես գործի սկզբում մեծամեծ խոչնդոտների հանդիպեմ, սակայն կարող կը լինիմ հարթել մի ճանապարհ, որը մեծ ջանք և զոհաբերութիւն կը պահանջէ, և սակայն ո՛չ մի տարափ, ո՛չ մի հողմ և ալեկոծութիւն չեն ջլատիլ նրա յղկութիւնն ու հարթութիւնը: Ես կը լինիմ քահանայ և ուսուցիչ և մասնաւոր արգելքները կը չքանան իմ առաջ: Գու աշխատիր տաք պահել մարդկանց սրտերը: Զը պէտք է յուսահատուիս: Գործը կը կատարուի, եթէ ուզես. գործելու

կամք և կամքի ոյժ է հարկաւոր միայն»:

Նա վերջացրեց նամակը, վազեց հօրը մօտ  
և ուրախ ուրախ լայտնեց նրան նամակի բո-  
վանդակուժիւնը:



30 Jan.





Handwritten text at the top of the page, possibly a signature or address, written in cursive script. The text is partially obscured by a large, irregular stain.







